



Supporting Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ (ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՂԲԵՋԱՆ, ՎՐԱՍՏԱՆ)
ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ

**ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՂԵՏՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ՝
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԻՑ**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուդիկ Ալավերդյան, ճգնաժամերի կառավարման ակադեմիա
Վարդան Կամբուրյան, Երևանի թիվ 137 դպրոցի ՆԶՊ ուսուցիչ
Համազասպ Մանուչարյան, Երևանի թիվ 31 դպրոցի ՆԶՊ ուսուցիչ

**RA Governments' disaster preparedness and educational policy/legislation
from children needs and rights perspective**

Evaluation Report

Rudik Alaverdyan, Academy of Crisis Management
Vardan Kamburyan, Teacher of Primary Military Preparation, Yerevan School 137
Hamazasp Manucharyan, Teacher of Primary Military Preparation Yerevan School 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն2

1. Աղետներին դիմակայելու ազգերի և համայնքների ունակությունների
 զարգացում Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագրի ներքո3

2. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակներից պաշտպանվելու
 համակարգը, օրենսդրական բազան, գնահատումը
 (ԱՌՆ-ի և դպրոցի տեսանկյունից) 14

3. Հայաստանի Հանրապետությունում կրթության օրենսդրական դաշտը, գնահատումը
 ԱՌՆ-ի և դպրոցի տեսանկյունից28

4. Հայաստանի Հանրապետությունում պետական չափորոշիչին համապատասխան
 դպրոցական առարկայական չափորոշիչներում և ուսումնական ծրագրերում
 աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ուսումնական հարցերի ընդգրկվածությունը,
 գնահատումը 35

5. Դպրոցի մակարդակով աղետների ռիսկի նվազեցման և կառավարման ոլորտում առկա
 մարդկային կարողությունների գնահատում.....45

 5.1 Դասավանդողներ46

 5.2 Դպրոցի անվտանգություն46

 5.3 Նյութատեխնիկական բազա48

6. Երաշխավորություններ և առաջարկություններ հանրակրթական դպրոցում աղետների
 ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման բարելավման համար49

 6.1 ԱՌՆ-ի և ուսումնառության ուսումնամեթոդական առանձնահատկությունները ..50

 6.2 Այլ առարկաներում աղետների ներկայացման մասին50

 6.3 ԱՌՆ-ի ուսուցման չափորոշիչների հստակեցում և գնահատում51

 6.4 ԱՌՆ-ի ուսուցման բարելավման ուղիները.....51

Եզրակացություններ և առաջարկություններ54

Գրականություն56

Ներածություն

Աղետներից բնակչության պաշտպանության կանխարգելիչ միջոցառումների թվին է պատկանում ուսուցումը: Այն ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքի ընթացքում: Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ուսուցման իրականացումը պահանջում է կազմակերպական, ուսումնա-մեթոդական, համակարգային մի ամբողջ շարք հարցերի լուծում: Հիմնական հարցերն, անկասկած, հետևյալերն են. ու՞մ, ո՞վ, ի՞նչ, ինչպե՞ս, որտե՞ղ:

ԱՌՆ-ի ուսուցումը կազմակերպվում է մարդկանց առանձին խմբերով՝ բաժանված հիմնականում ըստ տարիքային կատեգորիաների:

ԱՌՆ-ի ուսուցման կազմակերպման համար առանձին ուսումնական կենտրոնների ստեղծումը իրատեսական չէ և ոչ ռացիոնալ: Միակ ռացիոնալ ուղին դա գործող կրթական հաստատությունների, կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների օգտագործումն է:

Ստացվում է, որ ԱՌՆ-ի ուսուցման համար բնակչության խմբավորումը ըստ տարիքային կատեգորիաների հարմարեցվում է ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների հնարավորությունների և չաշխատող բնակչության առկայության հետ:

Ուսումնական հաստատությունների թվին են պատկանում նախադպրոցական հաստատությունները, հանրակրթական դպրոցները, ՄՄՈՒՀ-րը, բուհերը և այլն: ԱՌՆ-ի կարևոր դերը հատկացվում է նախադպրոցական և դպրոցական տարիքներին, որոնց մոտ առավել արդյունավետ է անվտանգության անհրաժեշտության գիտակցության սաղմնավորումը, ամրապնդումը, զարգացումը, անվտանգ կենսակերպի, հիմնական գիտելիքների ուսուցանումը, կարողությունների, դիրքորոշումների ձևավորումը:

ԱՌՆ-ի ուսուցման առկայությունը դպրոցի ուսումնական ծրագրերում մեծ ռեսուրսներ է պարունակում սովորողի քաղաքացիական դաստիարակության, բազմակողմանի զարգացման, անվտանգության կուլտուրայի ձևավորման և մարդկային այլ որակների զարգացման համար: Ցավոք, այդ հնարավորությունները դեռևս մասնակի են օգտագործվում: ԱՌՆ-ի հարցերով առարկաները չեն պատկանում ավանդույթներ ունեցող առարկաների թվին: Ուսուցման կատարելագործման գործում առկա է կազմակերպական, օրենսդրական, ուսումնամեթոդական և այլ աշխատանքների լայն ճակատ:

1. Աղետներին դիմակայելու ազգերի և համայնքների ունակությունների զարգացում Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագրի ներքո

Աղետների ծագման հաճախականության աճը, աղետների բազմազանությունն ու դրանց միջև փոխադարձ կապերը, ավելի ու ավելի ահագնացող ծանր հետևանքները պահանջում են աղետների նվազեցմանն ուղղված լուրջ և հիմնավոր ռազմավարություն:

Այս բնագավառը, բնական է, գտնվում է ՄԱԿ-ի ուշադրության կենտրոնում:

ՄԱԿ-ի համապատասխան կառուցվածքների, համակարգող աշխատանքների արդյունքն է աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի (18-22 հունվարի 2005 թ., Քոբե, Հյոգո, ճապոնիա) ընդունած Հյոգոյի 2005-2015 թթ. Գործողությունների ծրագիրը: Այն ընդգրկում է աղետների նվազեցման նպատակները, ակնկալվող արդյունքները, ռազմավարական նպատակները, 2005-2015թթ. գործողությունների ծրագրի առաջնայնությունները, իրականացման գործողությունները, մասնակիցներին:

Քանի որ ընդունած Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագրին միացած երկրների համար (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության) այն կարևոր է, ուստի անդրադառնանք որոշ կարևոր հարցերի և, առանձնապես, կրթության բնագավառին, ինչպես նաև համայնքներին վերաբերվող խնդիրներին:

Համաժողովը բացառիկ հնարավորություն է ընձեռել աղետների նկատմամբ խոցելիության¹ և աղետների վտանգի նվազեցմանն ուղղված ռազմավարական և համակարգված մոտեցումների ներկայացման և խթանման համար: Այստեղ կարևորվել է ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունը ու ցույց տրվել այդ կարողությունների ձևավորման ուղիները:

Աղետների հետևանքով առաջացած կորուստները հետզհետե աճում են՝ լուրջ հետևանքներ թողնելով մարդկանց գոյատևման, ձեռք բերված նվաճումների վրա: Աղետների վտանգը գլոբալ բնույթ ունի, քանի որ դրա հետևանքները և ակտիվությունը մի տարածաշրջանից կարող են անցնել մյուս տարածաշրջաններ: Զուգորդվելով մի շարք խոցելի գործոնների, այդ թվում՝ փոփոխվող ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական պայմանների, չալանավորված ուրբանիզացիայի, բարձր ռիսկային գոտիներում զարգացումների, թերզարգացածության, շրջակա միջավայրի դեգրադա-

ցիայի, կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության, երկրաբանական աղետների, հազվագյուտ ռեսուրսների համար մրցակցության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաձայնակների ազդեցության հետ, կարելի է եզրակացնել, որ ապագայում աղետները կարող են հարաճուն վտանգ ներկայացնել համաշխարհային տնտեսության, ազգաբնակչության և զարգացող երկրների կայուն զարգացման համար: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ամեն տարի աղետներից տուժվել է միջին հաշվով 200 միլիոն մարդ:

Աղետի ռիսկ առաջանում է, երբ վտանգները ազդում են ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի խոցելի գործոնների վրա և հակառակը: Չնայած աղետների ռիսկի նվազեցման և դրանց դիմագրավելու ունակությունների մեծացման անհրաժեշտության և կարևորության գիտակցումը հետզհետե խորանում է, աղետներն ու, մասնավորապես, ռիսկերի կառավարումն ու նվազեցումը շարունակում են մնալ որպես գլոբալ մարտահրավերներ:

Ըստ միջազգային մակարդակով համաձայնության, ռիսկերի նվազեցմանն ուղված քայլերը պետք է հետևողականորեն տեղ գտնեն քաղաքականությունների, կայուն զարգացման և աղքատության հաղթահարման պլանների ու ծրագրերի մեջ, ինչպես նաև սատարվեն երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցության (ներառյալ գործընկերությունների) միջոցով: Կայուն զարգացումը, աղքատության հաղթահարումը, բարեխիղճ կառավարումը և աղետների ռիսկերի նվազեցումը փոխկապակցված են: Ուստի սպասվող մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է արագացնել համայնքային և պետական մակարդակներով ռիսկերի կառավարման և նվազեցման անհրաժեշտ հաստատություններ ստեղծելու ուղղությամբ միասնական քայլերը: Հարկ է գիտակցել, որ այս մոտեցումը կարևոր նշանակություն ունի միջազգայնորեն ընդունված զարգացման նպատակներին, ներառյալ՝ «Հազարամյակի հռչակագրում» ամփոփված նպատակներին հասնելու առումով:

Յուրօրինակ ռազմավարություն

Աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի խթանման կարևորությունը վերջին տարիներին ճանաչվել է միջազգային և տարածաշրջանային, ինչպես նաև պետական և տեղական մակարդակներով ընդունված հռչակագրերում և գործողությունների ծրագրերում:

Դիտարկվել է Յոկոհամայի ռազմավարությունը, դասերը և հայտնաբերված բացերը: «Առավել անվտանգ աշխարհ»-ի Յոկոհամայի ռազմավարությունը՝ «Բնական աղետների կանխման, պատրաստականության և նվազեցման մասին 1994 թվականի ուղենիշները և իրականացման գործողությունների ծրագիրը» («Յոկոհամայի ռազմավարություն»), աղետների ռիսկերի և դրանց հետևանքների նվազեցման անկյունաքարային ուղեցույց է:

Հյոգոյի համաժողովում շեշտվել և կարևորվել է այն, որ ԱՌՆ-ի գործողություններն ավելի լրջորեն հիմնվեն տեղական համայնքների իրազեկման, անձանց շահագրգռելու և ներգրավելու մոտեցման վրա:

Բացթողումներ և դժվարություններ են բացահայտվել հետևյալ հինգ հիմնական ոլորտներում.

- ա) կառավարման ոլորտ,
- բ) ռիսկի բացահայտում, գնահատում, հսկողություն և վաղ ազդարարում,
- գ) գիտելիքի կառավարում և կրթություն,
- դ) ենթադրյալ ռիսկային գործոնների նվազեցում,
- ե) արդյունավետ արձագանքման և վերականգնման գործողությունների պատրաստականություն:

Հյոգոյի համաժողովի նպատակները, ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակները

Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովը կայացել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ, հինգ հատուկ նպատակների շուրջ.¹

ա) ավարտել Յոկոհամայի ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայումը, դրա վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն՝ նպատակ ունենալով թարմացնել աղետների նվազեցման XXI դարի ուղենիշային ծրագիրը,

բ) կանխորոշել այն առանձնահատուկ գործողությունները, որոնց նպատակն է երաշխավորել Յոհանեսբուրգի Կայուն զարգացման համաշխարհային գազաթնաժողովի իրականացման պլանի խոցելիության, ռիսկի գնահատման և աղետների կառավարման վերաբերյալ դրույթների իրականացումը,

¹ Գլխավոր ասամբլեայի 2003 թ. դեկտեմբերի թիվ 58/214 որոշմամբ:

զ) կայուն զարգացման հասնելու, բացթողումներն ու խնդիրները բացահայտելու համատեքստում փոխանակել աղետների հետագա նվազեցման ոլորտում առկա հաջողված փորձն ու քաղված դասերը,

դ) բարձրացնել աղետների նվազեցման քաղաքականության կարևորության մասին իրազեկությունը՝ դրանով իսկ նպաստելով և խթանելով վերջիններիս իրագործումը,

ե) ամրապնդել աղետների ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների վստահելիությունը և առկայությունը բոլոր տարածաշրջանների հասարակայնության և աղետների կառավարման գործակալությունների համար, ինչպես նշված է Յոհանեսբուրգի իրագործման պլանի համապատասխան դրույթներում:

“Ակնկալվող արդյունքներ”-ում նշվում է *“պետություններում և համայնքներում աղետների հետևանքով պատճառված մարդկային, սոցիալական, տնտեսական և բնապահպանական ակտիվների կորուստների էական նվազեցումը”*:

Այս արդյունքներին հասնելու համար պահանջվում է շահագրգիռ բոլոր դերակատարների, ներառյալ՝ կառավարությունների, տեղական և միջազգային կազակերպությունների, քաղաքացիական հասարակության, կամավորների, մասնավոր հատվածի և գիտական հաստատությունների լիակատար նվիրվածությունն ու ներգրավվածությունը:

Ռազմավարական նպատակների թվում է բոլոր մակարդակներով, հատկապես համայնքային մակարդակով, աղետների դիմակայման ունակություններին մշտապես² նպաստող հաստատությունների, մեխանիզմների և կարողությունների ստեղծումը և ուժեղացումը:

2005-2015 թթ. գործողությունների ծրագրի գերակայությունների ընդհանուր դրույթներն ընդգրկում են.

Յոկոհամայի ռազմավարության մեջ ընդգրկված սկզբունքները պահպանում են իրենց կարևորությունը:

Յուրաքանչյուր պետություն իր երկրի տարածքում առաջնային պարտավորություն է կրում ԱՌՆ-ի համար: Անհրաժեշտ տեղեկություններ և ռեսուրսներ ունենալու, ինչպես

² Դիմակայման ունակություն/դիմադրողականություն՝ “դիմադրելու կամ փոփոխվելու միջոցով հնարավոր վտանգների ենթակա համակարգի, համայնքի կամ հասարակության հարմարվելու ունակությունը, ինչի շնորհիվ այն ապահովում է և պահպանում գործունեության և կառուցվածքի ընդունելի մակարդակ: Սա որոշվում է սոցիալական համակարգի ինքնակազմակերպման մակարդակով, որի արդյունքում ապագա աղետներից ավելի լավ պաշտպանվելու և ռիսկի նվազեցման միջոցառումների բարելավման նպատակով այն ավելացնում է անցյալում տեղի ունեցած աղետներից դասեր քաղելու իր ունակությունը” (ՄԱԿ/ԱՆՄԿ, Ժնն 2004թ.):

նան աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու լիազորությամբ օժտված լինելու շնորհիվ համայնքները և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ի վիճակի լինեն իրականացնելու աղետների ռիսկի կառավարում և նվազեցում:

Պետք է ընդլայնել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում միջազգային և տարածաշրջանային համագործակցությունն ու օժանդակությունը, նաև, հետևյալ քայլերի միջոցով.

- աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կարողությունների ձևավորման նպատակով գիտելիքի, տեխնոլոգիաների և փորձի փոխանցում,

- հետազոտությունների արդյունքների, քաղած դասերի և լավագույն փորձի փոխանակում:

Կանխարգելման մշակույթի խթանումը, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման նպատակով համարժեք ռեսուրսների համախմբումը ապագայում զգալիորեն հատուցվելիք ներդրումներ են: Ռիսկի գնահատումը և վաղ ազդարարման համակարգերը լուրջ միջոցներ են, որոնք պաշտպանում են և փրկում կյանքեր, նյութական արժեքներ, նպաստում են կայուն զարգացմանը և, որպես առաջնահերթ միջոցառում, շատ ավելի ծախսարդյունավետ են, քան հետադեպի արձագանքման և վերականգնման միջոցառումները:

Ընդունված են գործողության գերակայությունները, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանցքային գործողությունները.

1. երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա է,
2. բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը,
3. օգտագործել գիտելիքը, նորարարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար,
4. նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները,
5. բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստականությունը բոլոր մակարդակներում:

1. Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա է

Առանցքային գործողությունների ազգային ինստիտուցիոնալ և օրենսդրական համակարգերում կարևորվել են՝

- աջակցել ռիսկի նվազեցման ազգային ինտեգրացված մեխանիզմների, ներառյալ՝ ազգային բազմաճյուղ պլատֆորմի³ ստեղծմանն ու հզորացմանը՝ միջճյուղային համակարգումը խթանելու նպատակով կատարելով կենտրոնականից մինչև տեղական մակարդակներով պատասխանատվության բաշխում:
- ճանաչել տեղական ռիսկերի ձևերի և միտումների առանձնահատկությունն ու կարևորությունը, ինչպես նաև ապակենտրոնացնել աղետների ռիսկերի նվազեցման պատասխանատվությունը և ռեսուրսները՝ դրանք բաշխելով համապատասխան ենթապետական և տեղական իշխանությունների միջև:

2. Բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը:

Առանցքային գործողությունների թվում են

- Ազգային և տեղական մակարդակով ռիսկերի գնահատումներ
- Վաղ ազդարարում
- Տարածաշրջանային և ձևավորվող ռիսկեր

3. Օգտագործել գիտելիքը, նորարարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար:

Ազգային գործողությունների թվում մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում “օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը բոլոր մակարդակներով անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար” բաժինը.

³ Ազգային պլատֆորմների ստեղծումը Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1999/63 և Գլխավոր ասամբլեայի թիվ 56/195, 58/214, և 58/215 բանաձևերի պահանջն է: «Ազգային պլատֆորմը» ընդհանրական հասկացություն է, որն օգտագործվում է աղետների ռիսկի նվազեցման գործունեության համակարգման և քաղաքականության ուղղորդման ազգային մեխանիզմները վկայակոչելու համար, որոնք բնույթով պետք է լինեն բազմաճյուղային և բազմադիսցիպլինային և ներառեն երկրի հանրային, մասնավոր հատվածների և քաղաքական հասարակության բոլոր շահագրգիռ դերակատարներին, այդ թվում, ըստ նպատակահարմարության, Միավորված ազգերի կազմակերպության ազգային մակարդակով ներկայացված գործակալությունները:

Աղետները կարող են զգալիորեն նվազեցվել, եթե մարդիկ քաջատեղյակ լինեն և շահագրգռված աղետները կանխելու և դրանց դիմակայելու մշակույթի հարցում, որն իր հերթին պահանջում է աղետների, խոցելիության և կարողությունների մասին համապատասխան գիտելիքի և տեղությունների հավաքում և սփռում:

Առանցքային գործողություններ

“Տեղեկատվության կառավարումը և փոխանակումը”

- Բարձր ռիսկային գոտիներում մարդկանց տրամադրել աղետների ռիսկերի և պաշտպանական միջոցառումների մասին մատչելի և հասկանալի տեղեկատվություն, վերջիններիս կողմից ռիսկի նվազեցմանն ուղղված քայլեր ձեռնարկել ու դիմակայման ունակությունների ձևավորման համար:
- Ուժեղացնել բոլոր ճյուղերի և տարածաշրջանների աղետների գծով փորձագետների, կառավարիչների և պլանավորողների միջև կապերը և մշակել գործակալությունների կամ այլ կարևոր մասնակիցների կողմից ռիսկի նվազեցման տեղական պլանների կազմման ընթացքում կուտակված փորձագիտական իմացությունից օգտվելու ընթացակարգեր կամ բարելավել արդեն գոյություն ունեցող ընթացակարգերը:
- Խթանել և ամրապնդել աղետների ռիսկի նվազեցման հարցերով զբաղվող գիտական համայնքների և արհեստավարժների միջև երկխոսությունը:
- Աղետների նվազեցման գործընթացին նպաստելու նպատակով խթանել թարմ տեղեկությունների, հաղորդումների, տիեզերական տեխնոլոգիաների և հարակից ծառայությունների օգտագործումը, կիրառությունը և հանրամատչելիությունը:
- Միջնաժամկետ հեռանկարում ստեղծել տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային օգտագործողին մատչելի տեղեկատուներ, գույքացուցակներ և տեղեկատվության փոխանակման ազգային համակարգեր և ծառայություններ:
- Թարմացնել աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող միջազգային ստանդարտ տերմինաբանությունը ծրագրերի մշակման և հաստատությունների զարգացման, ինչպես նաև գործողությունների, հետազոտությունների, ուսումնական և հանրության իրազեկման ծրագրերում օգտագործման նպատակով և լայնորեն տարածել այն առնվազն ՄԱԿ-ի բոլոր պաշտոնական լեզուներով:

Կրթություն և ուսուցում

- Խրախուսել ԱՌՆ-ին վերաբերող ուսումնական նյութերի ընդգրկումը դպրոցների ուսումնական ծրագրերի համապատասխան բաժիններում, ինչպես նաև պաշտոնական և ոչ պաշտոնական այլ աղբյուրների օգտագործումը՝ տեղեկատվությունը երիտասարդությանն ու երեխաներին մատչելի դարձնելու նպատակով:
- Խրախուսել դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղական ռիսկերի գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ ծրագրերի իրականացումը:
- Խրախուսել դպրոցներում այնպիսի ծրագրերի և գործընթացների իրականացումը, որոնց նպատակն է ուսուցանել, թե ինչ պետք է անել վտանգների ազդեցությունները նվազեցնելու համար:

Մեր կարծիքով, հաշվի առնելով ԱՌՆ-ի զլոբալ ակտիվացման անհրաժեշտությունը, վերը նշված երեք կետերը կարելի էր ընդհանրացնել մեկ կետով, այն է՝

- *Խրախուսել ԱՌՆ հարցերով ուսումնական ծրագրերի լայն ներդրումը նախադպրոցական, դպրոցական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններում:*
- Մշակել աղետների ռիսկերի նվազեցման կրթական և ուսուցողական ծրագրեր, որոնք նախատեսված են առանձին ոլորտների մասնագետների, ներառյալ՝ նախագծողների, արտակարգ իրավիճակների կառավարման մասնագետների, տեղական կառավարման մարմինների պաշտոնյաների և այլոց համար:
- Խրախուսել համայնքներում ուսուցողական նախաձեռնությունների իրականացման գործընթացները:
- Ապահովել կրթական և ուսուցողական ծրագրերին կանանց և խոցելի խմբերի համահավասար մասնակցությունը: Խթանել գենդերային և մշակութային զգայուն հարցերի ուսուցումը՝ որպես աղետների ռիսկերի ոլորտում կրթության և ուսուցման բաղկացուցիչ մաս:

Հանրային իրազեկություն

- Աղետներին դիմակայելու մշակույթը բարձրացնելու և երկարատև ուսումնական ծրագրերում հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը խթանելու նպատակով խրախուսել զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը:⁴

4. Նվազեցնել հիմնային ռիսկի գործոնները:

Առանցքային գործողությունների շարքում սոցիալական և տնտեսական գործողություններից նշվել են նաև.

- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարումը
- Սոցիալական և տնտեսական զարգացման գործողությունները
- Հողօգտագործման պլանավորումը և այլ տեխնիկական միջոցները

Առանցքային գործողությունների շարքում սոցիալական և տնտեսական գործողություններից որպես կարևոր գործոն՝ խրախուսվում է սննդային անվտանգության ապահովումը հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առկա են երաշտների, ջրհեղեղների և ցիկլոնների վտանգներ, որոնք կարող են բացասական անդրադառնալ գյուղատնտեսության վրա հիմնված կենսամիջոցների վրա:

5. «Բոլոր մակարդակներով բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստվածության» առանցքային գործողություններում նշվել են.

- հզորացնել աղետների տարածաշրջանային, պետական և տեղական կառավարման քաղաքականությունը, տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունները:
- խրախուսել և օժանդակել վաղ ազդարարման, աղետների ռիսկերի նվազեցման, աղետներին արձագանքելու, զարգացման և այլ համապատասխան ոլորտներում գործող բոլոր մակարդակների կազմակերպությունների միջև համագործակցությանը, թիմային մոտեցմանը, երկխոսության հաստատմանը, տեղեկատվության փոխանակմանը և համակարգմանը և օժանդակել նրանց, որպեսզի ձևավորեն աղետների ռիսկի նվազեցման ամբողջական մոտեցում:

“Իրականացում և հետագա գործողություններ”-ի ընդհանուր դրույթներում նշվել են

⁴ “Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր” էջ 13

- Գործողությունների ծրագրում կարևորվում է բազմաճյուղային մոտեցումը: Քաղաքացիական հասարակությունը, կամավորները և համայնքային կազմակերպությունները, գիտական համայնքը և մասնավոր հատվածը հանդիսանում են կարևոր մասնակիցներ, որոնք օժանդակում են աղետների ռիսկերի նվազեցման աշխատանքների բոլոր մակարդակներով իրականացմանը:
- Թեև յուրաքանչյուր պետություն առաջնահերթ պատասխանատվություն է կրում իր զարգացման համար, կարողունակ դարձնող միջազգային միջավայրը կենսական նշանակություն ունի: Հիմք ընդունելով Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը՝ պետությունները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները պետք է խթանեն ռազմավարական ավելի մեծ համագործակցությունը ՄԱԿ-ի, ԱՌՆ-ի մեջ ներգրավված տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների միջև:
- Պետությունները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները պետք է սատարեն տարածաշրջանային և միջազգային մեխանիզմների և կազմակերպությունների միջոցով ցանցերի ձևավորման, քարոզչության, համակարգման, տեղեկությունների և փորձի փոխանակման, վտանգների և խոցելիության գիտական մոնիթորինգի, ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման և աղետների ռիսկերի դիմակայման ոլորտներում պլաններ, քաղաքականություն և ընդհանուր գործելակերպ մշակելու կարողություններին:

Իսկ “Պետություններ”-ում շեշտվել է

Դրսևորելով սեփականատիրության ուժեղ զգացում և համագործակցելով քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ, բոլոր պետությունները, հաշվի առնելով ԱՌՆ-ի հետ կապված տեղական պահանջները և գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերը, պետք է ձգտեն իրենց ֆինանսական միջոցների, մարդկային և նյութական ռեսուրսների սահմաններում պետական և տեղական մակարդակներով իրականացնել հետևյալ առաջադրանքները:

- Պատրաստել և հրատարակել ԱՌՆ-ի կարգավիճակի պետական բազային գնահատման արդյունքները :

- Գործողությունների ծրագրի իրականացման և դրա ընթացքին հետևելու նպատակով մշակել ազգային համակարգման մեխանիզմներ և տեղեկությունները տրամադրել Աղետների նվազեցման միջազգային ռազմավարության քարտուղարությանը:
- Հրապարակել և պարբերաբար թարմացնել սույն Գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող աղետների նվազեցման ազգային և միջազգային համագործակցության ծրագրերի ամփոփագրերը:
- Գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ ազգային առաջընթացի վերանայման համար մշակել ընթացակարգեր, որոնք ներառում են ծախսարդյունավետության վերլուծության, ընթացիկ վերահսկողության, ռիսկերի և խոցելիության գնահատման համակարգեր հատկապես այն տարածաշրջանների համար, որոնք գտնվում են ջրօդերևութաբանական և սեյսմավտանգ գոտիներում:
- ԱՌՆ-ի առաջընթացին վերաբերող տեղեկատվությունն ընդգրկել կայուն զարգացման առկա միջազգային և այլ ծրագրերի զեկույցներում:
- Ըստ նպատակահարմարության՝ քննարկել աղետների նվազեցման միջազգային համաձայնագրերին միանալու, դրանք հաստատելու և վավերացնելու հարցերը, ինչպես նաև այդ համաձայնագրերի անդամ լինելու դեպքում ձեռնարկել դրանց արդյունավետ կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումներ:⁵
- Խթանել կլիմայի առկա և հետագա փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցման խնդիրների ընդգրկումն ԱՌՆ-ի և կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարությունների մեջ: Երաշխավորել, որ երկրաբանական վտանգները, ինչպիսիք են երկրաշարժերն ու սողանքները, լիովին հաշվի կառնվեն ԱՌՆ-ի ծրագրերում:⁶

Ներկայացված են նաև “տարածաշրջանային կազմակերպությունների և հաստատությունների” և “միջազգային կազմակերպությունների” հետագա գործողությունները:

⁵ Ինչպես, օրինակ՝ “Աղետների մեղմացման և փրկարարական գործողությունների համար հեռահաղորդակցության ռեսուրսների մատակարարման մասին” Տամպերի կոնվենցիան (1998 թ.), որն ուժի մեջ է մտել 2005թ հունվարի 8-ին

⁶ “Հյուսիս 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր”, էջ 18

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՆ
(ԱՌՆ-Ի ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ)**

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է զգալի օրենսդրական իրավական բազա աղետների կառավարման նպատակով

Դրանց թվում են.

1. *Նախագահի հրամանները*
2. *Միջազգային պայմանագրերը*
3. *Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն*
4. *Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին*
5. *Քաղաքացիական պաշտպանության մասին*
6. *Սեյսմիկ պաշտպանության մասին*
7. *Հրդեհային անվտանգության մասին*
8. *Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին*
9. *Հայաստանի փրկարար ծառայության մասին*
10. *ՔՊ ստորաբաժանումների մասին*

նաև այլ բնագավառների գործողությունը կարգավորող ՀՀ մի շարք օրենքներ:

Բացի վերոհիշյալ օրենքներից ընդունված են բազմաթիվ ենթաօրենսդրական փաստաթղթեր, որոնցով կարգավորվում է արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության գործընթացը:

Անդրադառնանք նշված օրենքների առանձին հարցերին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում.

- ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը,
- բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,
- բնական և տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների՝ ժամանակակից մոնիտորինգով և կանխարգելմամբ զբաղվող միջազգային կառույցներում ներգրավումը, բնական և տեխնաձին վտանգների հուսալի կանխատեսումը, կանխարգելումն ու

չեզոքացումը, քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության և կայունության ապահովումը:

Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները

- Բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը:⁷

ՕՐԵՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացիական պաշտպանության կազմավորումները դրանք համայնքներում, կազմակերպություններում ստեղծվող կազմավորումներն են, որոնք հանդերձավորված են փրկարարական և անհետաձգելի վթարա-վերականգնողական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայով և հանդերձանքով, գույքով ու նախատեսված են իրականացնելու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ և չեն մտնում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կազմի մեջ:

Հոդված 3. Քաղաքացիական պաշտպանության համակարգը ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 9. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ

Հայաստանի Հանրապետության նախարարները, (գերատեսչությունների ղեկավարները), մարզպետները, (Երևանի քաղաքապետը), համայնքների և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար նախարարությունների, (գերատեսչությունների) մարզերի, (Երևանի քաղաքի) համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետերն են:

Հայաստանի Հանրապետության կառավարության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպությունների իրավասությունը քաղաքացիական պաշտպանության բնագավառում հետևյալն են.

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ա) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության ընդհանուր ղեկավարումը,

⁷ “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ”, էջ 3, 7

բ) ապահովում է քաղաքացիական պաշտպանության բնագավառում պետական միասնական քաղաքականության իրականացումը,

գ) սահմանում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման կարգը,

դ) հաստատում է քաղաքացիական պաշտպանության զարգացման ծրագրերը և վերահսկում է դրանց կատարումը,

ե) սահմանում է քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքների ցանկն ըստ վտանգավորության աստիճանի,

զ) սահմանում է քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործողության կարգը.

է) հաստատում է հատուկ, կարևորագույն օբյեկտների, ինչպես նաև առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության իրականացման կարգը,

ը) հաստատում է բնակչության ազդարարման և իրազեկման կարգը,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված այլ լիազորություններ;

Հոդված 15. Կազմակերպությունների իրավասություններն են (այդ թվում կրթական կազմակերպություններ).

ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը,

բ) ստեղծում են փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուժեր,

գ) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ

Պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններն ստեղծում են քաղաքացիական պաշտպանության ծառայություններ: Այդ կազմակերպությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Բնակչության պաշտպանության համակարգում ընդգրկվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները:

Բնակչության տարահանումը, պատսպարումը և անհատական պաշտպանությունը կազմակերպում և իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները արտակարգ իրավիճակներում՝

ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը.

բ) աջակցում են փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացմանը և ստեղծում են անհրաժեշտ ուժեր համապատասխան աշխատանքներ կատարելու համար:

Հատուկ ուշադրություն է դարձվում բնակչության ուսուցման կազմակերպմանը:

Արտակարգ իրավիճակների հիմնահարցերի վերաբերյալ բնակչության ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանրապետական գործադիր, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ու համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գլուխ 4. Հրդեհային անվտանգության միջոցառումները բնակավայրերում և օբյեկտներում:

Բնակավայրերը և օբեկտները պետք է ապահովված լինեն հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին և շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի:

Շենքերի, շինությունների, կազմակերպությունների ծավալահատակագծային ու կառուցվածքային լուծումները, ինչպես նաև դրանց միջև անջրպետները պետք է ապահովեն մարդկանց անվտանգությունը և հրդեհների մարումը:

Բնակավայրերի բնակելի տարածքի սահմաններում պոտենցիալ վտանգավոր/հրդեհների աղետային զարգացման առումով պահեստների և շինությունների, ինչպես նաև այրվող գազերով և հեղուկներով տարանցիկ խողովակաշարերի տեղաբաշխումն իրականացվում է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նշված օբեկտների համար շինարարական հրապարակներն ընտրում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ելնելով հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննության արդյունքներից:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 27.09.1996թ, թիվ 320, ք Երևան

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցման կազմակերպման մասին»

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում 1996/97 ուսումնական տարվանից «Քաղաքացիական պաշտպանություն» առարկան վերանվանել «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկա և ուսումնական պլաններում նախատեսել հետևյալ ժամաքանակները՝

ա. Բարձրագույն ուսումնական հաստատություններում 32 ժամ ընդհանուր և 16 ժամ մասնագիտական դասընթացներ.

բ. միջնակարգ մասնագիտական հաստատություններում, քոլեջներում և ուսումնական կենտրոններում 18 ժամ ընդհանուր դասընթաց.

գ. Հանրակրթական դպրոցներում նախկին «Քաղաքացիական պաշտպանություն» առարկային ըստ դասարանների հատկացված ժամաքանակին համապատասխան:

Նշված առարկաների ժամաքանակների ավելացումը կատարել ուսումնական հաստատությունների ուսումնական պլանով նախատեսվող ընդհանուր ժամաքանակի սահմաններում:

2. Սահմանել, որ «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», «Աղետների բժշկություն», «Բժշկագիտության և երեխաների առողջապահության հիմունքներ», «Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բժշկական օգնություն», «Կենսագործունեության ապահովում» առարկաների ուսումնական ծրագրերը հաստատվում և դրանցում փոփոխությունները կատարվում են ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության համաձայնությամբ:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ ոչ պետական ուսումնական հաստատություններում «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցումն ապահովելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1996թ. սեպտեմբերի 27-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 30.01.2003 թ թիվ N134-N

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին

Սահմանվել է կառավարման մարմինների ու կազակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը համաձայն հավելվածի:

Պատրաստության բարձրացման և բնակչության ուսուցման միջոցառումների ամենամյա պլանավորման և դրանց կատարման ապահովումն իրականացնում է նշված բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազոր մարմինը:

Հավելվածի սույն կարգը կանոնակարգում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պատրաստման, դրանց ղեկավար կազմի, աշխատողների, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի և բնակչության ուսուցման գործընթացը:

Կառավարման մարմինների և կազմակերպությունների հիմնական նպատակն է կատարելագործել նրանց գործնական ունակություններն, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության այն բոլոր միջոցառումները իրականացնելու համար, որոնք հուսալի կերպով կապահովեն բնակչության և նյութական արժեքների պաշտպանության, կառավարման մարմինների, կազմակերպությունների կայուն գործունեությունը: Բնակչության ուսուցման հիմնական նպատակն է նշված բնագավառներում բնակչության պահելաձևի, վարքի կանոնների և հմտությունների ուսուցումը, որը կապահովի նրանց պաշտպանությունը, կնվազեցնի մարդկային կորուստները:

Հավելվածում տրված է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով պատրաստման և ուսուցման կազմակերպման կառուցվածքը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (ՀՀ ԱԻՆ) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

ՀՀ ԱԻՆ-ը հանդիսանում է աղետների կառավարման լիազոր մարմին: Նախարարության հիմնական խնդիրներից են՝

- Բնակչության պաշտպանության բնագավառում միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացման համակարգումը,
- Փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների կատարումը,
- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման ամփոփման և որոշումների մշակման և ընդունման աշխատանքների, նշված ոլորտներում կառավարման իրականացումը և համակարգումը,

- ԱԻ առաջացման հիմնավոր պատճառ համարվող օբյեկտների գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության կազմակերպումն ու համակարգումը,

- Հատուկ թույլատրողական և վերահսկողական գործառնությունների իրականացում նախարարության օրենսդրորեն ամրագրված իրավասությունների շրջանակներում:

- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարհանման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը:

- ԱԻ կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը և այլն:

ՀՀ ԱԻ նախարարության ենթակայության կառույցներն են՝

- Հայաստանի փրկարար ծառայությունը
- «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը» գործակալությունը
- Հիդրոոդերևութաբանական և մոնիթորինգի պետական ծառայությունը
- Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը
- Պետական ռեզերվների գործակալությունը
- Հակակարկտային ծառայությունը
- Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա ՊՕԱԿ
- Տեղեկատվական կենտրոն ՓԲՀ
- Հատուկ փրկարարական ջոկատ ՓԲՀ
- Աղետների բժշկություն ՊՕԱԿ
- ԱՌՆԱՊ հիմնադրամ:

Նախարարությունը համագործակցում է աղետների կառավարման համակարգի բոլոր կառույցների հետ, ինչպես նաև այլ երկրների համապատասխան կառույցների հետ մասնավորապես ԱՄՆ, Անգլիա, ՌԴ, Իտալիա, Բելոռուսիա, ՌԻկրաինա, Վրաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Շվեդիա, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Հունգարիա, Արգենտինա, Էստոնիա, Բելգիա, Ճապոնիա, Չինաստան:

Միջազգային կազմակերպությունների հետ սերտորեն համագործակցում է ՄԱԶԾ (UNDP), Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության, Եվրոխորհրդի «Խոշոր աղետների դեմ պայքարի բաց համաձայնագիր», Կարմիր Խաչ և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա, ՆԱՏՕ (PFP), ՄԱԳԱՏԵ, Բժիշկներ առանց սահմանի, Սևծովային համագործակցության երկրներ, Բնական և տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդ, Շվեդիայի և Էստոնիայի փրկարարական ծառայությունների, ԱՊՀ միջպետական խորհրդի, Համաշխարհային բանկի, Ճապոնիայի JICA-ի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC), Ասիական աղետների նվազեցման խորհրդի (ADRC) և անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների ԱԻ հարցերով միջպետական խորհրդի հետ:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) իրականացնում է աղետների կառավարման հարցերով ուսուցման կազմակերպումը հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում: Նրա ենթակայության տակ գտնվող կառույցներն են՝ Գիտության ազգային ակադեմիան, հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական կրթօջախներ, արհեստագործական կրթօջախներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտահետազոտական ինստիտուտներ:

Ոլորտում իրացվող ծրագրերն են՝ դասագրքերի հրատարակում ավագ դասարանների համար և տարական դասարաններում ԱԿ հիմնահարցերի ներդրում: Իրականացվել են դպրոցական համակարգի համար նախատեսված դասագրքերի և ծրագրերի ներդրման աշխատանքներ, որոնց մասնակցել են ՃԿՊԱ-ի, պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունները:

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան կազմակերպում և իրականացնում է բարձրագույն կրթական ծրագրերով երկաստիճան ուսուցում. բակալավր (6 մասնագիտություն), մագիստրատուրա (2 մասնագիտություն), ինչպես նաև միջին մասնագիտական ծրագրեր (2 մասնագիտություն): Իրականացվում է հրշեջ-փրկարարների պատրաստում, ինչպես նաև կազմակերպում է պետական, տեղական

ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ղեկավար աշխատողների և մասնագետների՝ ԱՌՆ-ի հարցերով որակավորման բարձրացման դասընթացներ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ ՄԱԶԾ-ի հետ Արարատի մարզում ուսուցման կազմակերպում, ԳՏՀ-ի հետ Լոռու և Տավուշի մարզերում ուսուցման կազմակերպում, Հայ-Շվեդա-Էստոնական համագործակցության շրջանակներում դպրոցներում տարիանման ուսուցում, SDC-ի «Արձագանք» ծրագրով հրշեջների ուսուցում:

Ակադեմիան իրականացնում է նաև աղետների ռիսկի, խոցելիության, կարողությունների, տարբեր տեսակի վտանգավոր երևույթների ծագման, զարգացման, հնարավոր հետևանքների վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ և հետազոտություններ, մշակում է բնակչության ուսուցման տարբեր տեսակի ուսումնական նյութեր, տարբեր խոցելի խմբերի հետ ուսուցման կազմակերպման մեթոդներ, կազմակերպում է գիտական և ուսումնական սեմինարներ՝ ԱՌՆ հարցերով բնակչության ուսուցման վերաբերյալ և այլն:

Համագործակցում է բոլոր պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Շվեդիայի, ԱՄՆ, Ճապոնիայի, Չինաստանի և մի շարք այլ երկրների համապատասխան ուսումնական հաստատությունների հետ:

Հայաստանում գործունեություն են ծավալում բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, որոնց մի մասն իրականացնում է ծրագրեր աղետների կառավարման բնագավառում:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) դերակատարությունը կայանում է ազգային և տեղական մակարդակներում ԱԻ ոլորտի կարողությունների զարգացումը՝ առավելապես կենտրոնանալով աղետների կանխարգելման և նվազեցման վրա:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ *“Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում” (2007-2009)* առաջին փուլ, որի նպատակն էր Արարատի մարզում իրականացնել տեղային մակարդակում ռիսկերի կառավարման փորձնական ծրագիր, բարձրացնել ազգային իրազեկվածության

մակարդակը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի փրկարար ծառայության լրատվական կենտրոնի կարողությունները:

Հայաստանում նշված գործընթացների շարունակությունն ապահովելու և ծրագրի պլանի մնացած ոլորտները հասցեագրելու նպատակով՝ ծրագրի երկրորդ փուլի միջոցառումները (2009-2010) նպատաուղված են աջակցելու Հայաստանում աղետների ռիսկի կառավարման օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգի հզորացմանը, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման ազգային համապարփակ ռազմավարության մշակմանը:

2008-ից ի վեր, ՄԱԶԾ-ն ԱԻՆ հետ հանդիսանում է աղետների կառավարման համակարգող խմբի համանախագահ:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հիմնական գործունեությունն աղետների դեպքում երեխաներին աջակցություն ցույց տալն է, ԱԻ դեպքում կանանց և երեխաների առաջնային առողջապահական կարիքների, երեխաների համար բարեկամական միջավայրի ապահովումը, որտեղ նրանք կարող են ընգրկվել բնականոն կենսակերպ ապահովող գործողություններում, ինչպես նաև երեխաների պաշտպանությունը ծնողներից բաժանվելուց և նրանց ընտանիքների վերամիավորման ապահովումը:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն ունի նաև նախապես պահեստավորված ԱԻ գույք, որում կան ընտանիքների համար նախատեսված հիգիենիկ պարագաների արկղեր, ուսումնական պարագաներ, առողջապահական արկղեր, անկողիններ, վերմակներ և այլն:

Ոլորտում իրականացվող ծրագրերը. տարվա ընթացքում կհիմնվի ԱԻ պայմաններում երեխաների սոցիալ-հոգեբանական աջակցության թիմ, համապատասխան ֆինանսավորման դեպքում նախատեսվում է իրականացնել “Արտակարգ իրավիճակներին դպրոցների նախապատրաստում” ծրագիր, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում կստեղծվի նոր համակարգ՝ ԱԻ դեպքում երեխաների տեղաշարժը վերահսկել նրանց ընտանիքների հետ կապի խզումը բացառելու նպատակով:

Համագործակցում է ՀՀ ԱԻՆ, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության և կրթության ու գիտության նախարարությունների հետ: Միաժամանակ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հանդիսանում է ԱԿ ընդլայնված թիմի անդամ:

Համաշխարհային առողջապահական կազմակերպության կողմից ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ 2010-2011թթ. համագործակցության երկամյա համաձայնագրի շրջանակներում աջակցություն առողջապահության նախարարությանն երկու ուղղությամբ՝ ԱԻ դեպքում առողջապահական հաստատությունների կայունության և անվտանգության հզորացման և ճգնաժամային կառավարման բնագավառում ուսումնական ծրագրերի վերանայման:

Համաշխարհային բանկն իրականացնում է ԱԿ ոլորտի ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրություն՝ համապատասխան առաջարկություններ անելու համար: Կառավարության պատրաստակամության դեպքում հնարավոր է հետագա ծրագրերի ֆինանսավորում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ *“Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման ինստիտուցիոնալ բարեփոխումների ձևավորում”*, վերջին 10 տարիների ընթացքում իրականացվող “Ջրամբար 1” և “Ջրամբար 2” ծրագրերը, որոնք իրականացվել են 22 համայնքներում և վերջինիս նպատակն է պաշտպանել ջրամբարներից վար բնակվող մոտ 500.000 մարդու կյանքը: Այս տարածքներում տեղադրվել են նաև վաղ ազդարարման համակարգեր:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հիմնական նպատակն է ԱԻՆ ՀՓԾ-ի աղետների նախապատրաստման և արձագանքման կարողությունների զարգացումը: Ավելին, 2008թ. դեկտեմբերի 8-ին Հայաստանի և Շվեյցարիայի կառավարությունների միջև կնքվեց ԱԻ պայմաններում համագործակցության պայմանագիր ”բուժմիավորումները”:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ *“Արձագանք”*, որն ուղված է հրշեջ-փրկարարների պատրաստմանը, *“Հրշեջները համայնքներում”* իրազեկման ծրագիր, ՀՓԾ կարողությունների զարգացում, *“Որոնում”* ծրագիր և բժշկական ստորաբաժանումների ստեղծում (դասընթացների անցկացում և սարքավորումներով հազեցում):

Գերմանական տեխնիկական համագործակցության կողմից ոլորտում իրականացվող *“Աղետների կանխարգելում Հարավային Կովկասում”* ծրագիրը լիովին ուղված է

աղետների ռիսկի կառավարմանը և հատկապես այս փուլում՝ 5 ռիսկային համայնքներում ԱՌՆ-ի միջոցառումներին: Հատուկ շեշտադրում կա վաղ ազդարարման վրա՝ բացահայտելու նույն ջրային ավազանում գտնվող վտանգված համայնքները և, անհրաժեշտության դեպքում, հիմնելու վաղ ազդարարման համակարգ: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել է Տավուշի և Լոռու մարզերի աղետների ռիսկի գնահատում:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունն աջակցություն է ցուցաբերում ՀՓԾ կարողությունների զարգացման և տեխնիկական վերազինման գործում: Արդեն տրամադրվել են 28 հրշեջ մեքենա և մշակվել նոր ծրագիր:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են. 2009 թ. սկսած՝ երկրաշարժի վտանգի քարտեզագրում Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում, ԱԻՆ համապատասխան գույքով կահավորված հրշեջ մեքենաների տրամադրում: Իրականացվել է նաև երկրի ողջ տարածքում գտնվող սողանքների հետազոտության ծրագիր (2006 թ.):

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից ոլորտում իրականացվող ծրագիրն է՝ ՀՓԾ Արտակարգ տեղեկատվական կենտրոնի հզորացում:

Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) գործունեությունը հիմնականում ծավալվում է 4 ոլորտներում՝ մարդասիրական արժեքների խթանում, աղետների արձագանքում, աղետների նախապատրաստում, առողջության և համայնքի պահպանում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են. սկսած 1988 թ. երկրաշարժից՝ ԿԽ/ԿՄ ՄՖ-ն Հայաստանում տրամադրել է մարդասիրական օգնություն, ինչպես նաև իրականացրել է վերականգնողական և Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կարողությունների զարգացմանն ուղղված մեծ թվով ծրագրեր: 1998 թ. ի վեր ՀԿԽԸ-ի հետ համատեղ ԿԽ/ԿՄ ՄՖ-ն Հայաստանում իրականացնում է Աղետների կառավարման ծրագիրը: Ներկայումս ԿԽ/ԿՄ ՀԿԽԸ-ի հետ համագործակցելով, նախատեսում է սկսել համայնքային աղետների ռիսկի նվազեցման ծրագիր:

“Վորլդ Վիժն Հայաստան” կազմակերպության նպատակն է բարձրացնել համայնքների կայունությունը և աշխատել նրանց հետ՝ ԱԻ դեպքում համատեղ և համապատասխան արձագանք իրականացնելու համար: Ներկայումս Հայաստանի 7 մարզերում իրականացնում է տարածքի զարգացման 10 ծրագիր. յուրաքանչյուր գրասենյակ ունի պահեստը և օգնության ու զարգացման ծրագրեր իրականացնելու առումով փորձառու աշխատակազմ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ *ԱՌՆ-ի գործում երեխաների և երիտասարդների կարողությունների զարգացում* (Գյումրիում և Ստեփանավանում):

“Մեյվ դը Չիլդրեն” կազմակերպության կողմից ոլորտում իրականացվող ծրագրեր. 2007-2008 թթ. թռչնագրիպի վերաբերյալ դասընթացների կազմակերպում և պաստառների բաշխում համայնքներում:⁸

⁸ “Հայաստանի՝ Աղետների կառավարման և վտանգների մասին տեղեկատվական համակարգերի օրենսդրության և հաստատությունների գնահատում”, էջ 26-29

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ,
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՌՆ-Ի ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ

3.1 ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Փոքր նկատառումներ.

Հանրակրթական պետական չափորոշիչ⁹ 1. ընդհանուր դրույթներում 2-րդ կետում գրվում է՝ “Հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝

1) մշակվում են ուսումնական առարկաների չափորոշիչներ ու ծրագրեր, օրինակելի ուսումնական պլաններ ...”, իսկ ահա IV. Հանրակրթական առարկաների չափորոշիչներ 8-րդ կետում “առարկաների պետական ծրագրերը”-ից հետո բաց է թողնված “ուսումնական պլանների” արտահայտությունը:

Հիմնավորում

Չափորոշիչներ -> ծրագրեր -> օրինակելի ուսումնական պլաններ կապը, մեր կարծիքով, չի կարելի մասնատել:

Առաջարկում ենք

Հանրակրթական պետական չափորոշիչի “2.2.2 Կարողություններ և հմտություններ” բաժնի համագործակցային կարողություններին ու հմտություններին վերաբերվող մասի ժ) կետը փոփոխել, ավելացնելով “նաև” բառը. “ժ/ իրավիճակները դիտարկել և մեկնաբանել **նաև** այլոց տեսանկյունից և այլն”. ավելացնել՝ գ/ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել **իրադրությունը, որոշել** սեփական քայլերը և դրանց հետևանքները”:¹⁰

“2.2.3. Արժեքային համակարգ” բաժնի դ) կետից հետո ավելացնել ևս մեկ կետ “ե/ **լինի հասարակության ակտիվ անդամ, պատրաստ և ունակ՝ անհրաժեշտության դեպքում կատարելու ինքնօգնության և փոխօգնության գործողություններ: Չնպաստի կենցաղային, բնական և այլ վտանգների ծագմանը**”:¹¹

“III. Տարրական դպրոցն ավարտողին ներկայացվող ընդհանրական պահանջները” գլխում 3.8 կետից հետո ավելացնել ևս մեկ կետ՝ “**3.9 իմանա կենցաղային հիմնական**

⁹ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N439-Ն որոշում Հավելված N2 (ՀՀ Կրթության և գիտության նախարարություն «Տեղեկագիր» 4/2010, էջ5)

¹⁰ “ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ”, էջ5

¹¹ “ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ”, էջ6

վտանգները և դրանցից խուսափումը: Տիրապետի հակահրդեհային, երթևեկության տարրական կանոններին”:

“Բնություն: Բնական գիտություններ” գլխում փոփոխել 4-րդ կետը՝ **“4. իր շրջակա տարածքում հնարավոր բնական և տեխնածին վտանգավոր երևույթների դեպքում ճիշտ կողմնորոշվելու, որոշում ընդունելու՝ վտանգից խուսափելու և պաշտպանվելու մասին”:** Նույն գլխի 8-րդ կետում ավելացնել “8. Կենցաղային անվտանգության, տանը և շրջապատում գտնվող օգտակար և վնասակար նյութերի հատկությունների, վնասակար նյութերի հետ վարվելու տարրական կանոնների մասին”:¹²

Տարրական կրթության ծրագրի կատարման արդյունքում սովորողների մոտ կարողությունների ձևավորմանն ու զարգացման մասին բաժնի 8-րդ կետը փոփոխել՝ **“առաջադրված տարբեր ուսումնական իրավիճակներում գտնել բնական և տեխնածին աղետներից պաշտպանվելու ամենապարզ, արդյունավետ գործողությունները”:** Նույն բաժնում 15-րդ կետում “... դպրոցում, տանը...” բառերից հետո ավելացնել **“փողոցում”** բառը:

“9. Ֆիզդաստիարակություն և սպորտ, նախնական զինպատրաստություն, անվտանգ կենսագործունեություն, առողջ ապրելակերպ”¹³ վերնագրից հանել “նախնական զինպատրաստություն” բառակապակցությունը, քանի որ կրտսեր դպրոցում այդ առարկան չի դասավանդվում: Նույն գլխի առաջին պարբերությունը փոփոխել՝ **“Տարրական կրթության ֆիզդաստիարակություն և սպորտ, անվտանգ կենսագործունեություն և առողջ ապրելակերպ ուսումնական բնագավառի հիմնական նպատակը առողջ, իր կարողություններին համապատասխան ֆիզիկապես զարգացած, անձնական հիգիենայի, առողջապահական և անվտանգության կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող, կարգապահ ու հայրենասեր անձի, ակտիվ քաղաքացու ձևավորումն է:**

“9. Ֆիզդաստիարակություն և սպորտ, նախնական զինպատրաստություն, անվտանգ կենսագործունեություն, առողջ ապրելակերպ” գլխի սովորողների կարողությունների ձևավորմանն ու զարգացման մասին բաժնում 6-րդ կետից հետո ավելացնել նոր կետ. **“7. Ֆիզիկական վարժություններում վերարտադրել տարբեր**

¹² “ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ”, էջ17

¹³ “ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ”, էջ24

իրավիճակներում հնարավոր ինքնօգնության և փոխօգնության տարրեր», իսկ 11-րդ կետը փոփոխել. «11. սովորած ֆիզիկական վարժությունները և խաղերը կատարել ինչպես առօրյա համապատասխան միջավայրում, այնպես էլ այլ բարդ պայմաններում»¹⁴

«V. Հիմնական դպրոցի շրջանավարտին ներկայացվող ընդհանրական պահանջները» գլխի 5-րդ կետի գ). ենթակետը փոփոխել. «գ/ բնական, տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներում, տարրեր վտանգավոր պատահարների, իրադարձությունների ժամանակ ճիշտ և արագ կողմնորոշման, իրադրության գնահատման, որոշման ընդունման, անհետաձգելի ինքնօգնության և փոխօգնության կարողությունների և հմտությունների ձևավորումը»¹⁵: Նույն գլխի 5.5.2 կետի 8-րդ ենթակետը փոփոխել. «*իմանալ շրջակա միջավայրում հնարավոր վտանգները, արդի մարտահրավերները, դրանց պատճառները, կանխարգելման ուղիները*» և ավելացնել նոր ենթակետ «կարողանալ կանխատեսել իր գործնետության բացասական հետևանքները՝ վտանգի ծագում, խոցելիության մեծացում»¹⁶ 5.5.8 կետի 6-րդ ենթակետը փոփոխել. «*ճ) իմանանալ իր տարածքում վտանգները, դրանց կանխման և կանխարգելման ուղիները, տիրապետել անվտանգ կենսագործունեության կանոններին և սովորեցնել դրանք իրենից փոքրերին*»¹⁷

3.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2015 թթ.

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքի, կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Դրանով էլ բացատրվում է մեր կողմից «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015թթ պետական ծրագրի» հնարավորինս մանրակրկիտ դիտարկումը:

«Կրթություն 2015»-ի դիտարկումը կատարվում է հիմնականում ԱՌՆ-ի ուսուցման բարելավման տեսանկյունից: Եվ մեր մոտեցումները, առաջարկությունները անմիջականորեն կամ անուղղակի ուղված են այդ նպատակին:

¹⁴ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶՍՓՈՐՈՇԻՉ», էջ25

¹⁵ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶՍՓՈՐՈՇԻՉ», էջ26

¹⁶ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶՍՓՈՐՈՇԻՉ», էջ29

¹⁷ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶՍՓՈՐՈՇԻՉ», էջ31

1) 28 կետի վերջում ավելացնել «Հատուկ ուշադրություն է դարձվում միջնակարգ կրթության չափորոշիչին համապատասխան առարկայական չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների միասնականությանը (համարժեքությանը կամ մշակմանը)»:¹⁸

Որոշ առարկաների համար առարկայական չափորոշիչներին այս կամ այն չափով համապատասխանող ուսումնական ծրագրերը չեն կարող ապահովել եղած ուսումնական պլաններով (ժամաքանակներով): Տրամադրված ժամաքանակներով հնարավոր է միայն մենախոսային դասախոսություններով մատուցել առաջարկված թեմաները:

Հիմնավորում

Իսկ չէ՞ որ, շատ թեմաներ (հատկապես ԱՌՆ-ի թեմաները) պահանջում են ինտերակտիվ մեթոդներ, որոնց համար ավելի ժամանակ է պահանջվում: «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչում» դա կա:

2) 39 կետը լրացնել «բուհերի մասնագիտական անվանացուցակը լրացնել մասնագիտություններով»:¹⁹

3) 66 կետի երրորդ նախադասությունը գրել այսպես «Կարողությունների պակաս է զգացվում հատկապես ծրագրերի կառավարման, ռազմավարական պլանավորման, ուսումնական հաստատության անվտանգության կառավարման, մոնիթորինգի և գնահատման, դոնորների հետ աշխատանքների բնագավառում»²⁰

Հիմնավորում

Դպրոցի, որպես մարդկային կուտակումներով օբյեկտի խնդիրներն աղետներից բնակչության պաշտպանության բնագավառում կարևոր են առաջին հերթին՝ սովորողների և անձնակազմի անվտանգության ապահովման տեսանկյունից:

4) 67 կետի վերջին նախադասությունը ձևակերպել այսպես. «Այժմ միջոցներ են ձեռնարկվում ընդլայնելու կրթության կառավարման տեղեկատվական համակարգը՝ ներառելով կրթության բոլոր մակարդակները, ամբողջացնելու

¹⁸ «Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր», էջ16, գլուխ 2.2.3

¹⁹ «Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր», էջ19, գլուխ 2.2.3

²⁰ «Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր», էջ30, գլուխ 2.4

տեղեկատվական պաշարները՝ ընդհուպ մինչև անհատականացված տվյալները, ուսումնական հաստատության խոցելիության վերաբերյալ տեղեկությունները, բարձրացնելու տեղեկատվական պաշարների մատչելիությունը շահառուների տարբեր խմբերի համար»:²¹

Հիմնավորում

Ուսումնական հաստատությունների անվտանգության միջոցառումների կառավարման համար անհրաժեշտ են սիստեմատիկ տվյալներ ուսումնական հաստատության խոցելիության վերաբերյալ:

5) 70 կետում ավելացնել հետևյալ ենթակետերը.

- ժամանակակից ուսումնամանկավարժական մեթոդների ներդրման անբավարար հետևողականությունը,
- արտադասարանական խմբերի սահմանափակ քանակը և ոչ ցանկալի արդյունավետությունը,
- միջառարկայական կապերի ուժեղացման անհրաժեշտությունը.²²

Հիմնավորում

Դիտենք հենց ԱՌՆ-ի ուսուցման տեսանկյունից: ԱՌՆ հարցերը դիտարկվում են մոտ 10 առարկաներում: Նրանց միջև կապերը, հատկապես անխզելիության և փոխանցելիության սկզբունքների պահանջների տեսանկյունից այնքան էլ բավարար չեն:

Իսկ մեկ ենթակետը փոքր ինչ փոխել ոճի պահպանման համար: Այն է՝

- Դասագրքերի որակի՝ բովանդակային առումով բարելավման անհրաժեշտությունը:
- 6) Առարկություններ ունենք 83 կետի վերաբերյալ: Կասկածելի են կրթական ծրագրի գլխավոր նպատակների իրականացման ռազմավարական մոտեցումներում մտցնել այսպիսի կետեր՝
- Նախապատվություն տալ այնպիսի ռազմավարությունների, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք,

²¹ “Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր”, էջ31, գլուխ 2.4

²² “Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր”, էջ31, գլուխ 2.5

- Առաջնություն տալ այն արդյունքներին, որոնք, լինելով էական, նաև հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում :²³

Մարտավարությունում, ըստ մեր կարծիքի, էժանացումն ու արագացումը հավանաբար ընդունելի են, իսկ ռազմավարությունում, այն էլ կրթության նման զգայուն բնագավառի համար խիստ կասկածելի են:

7) Կրթության զարգացման հիմնական ծրագրային ուղղությունները 109.-ի 2)-ի ե.-ին ավելացնել՝ այդ թվում ԱՌՆ-ի տեղական շտեմարան: Այն կընդգրկի ԱՌՆ-ի հիմնական և հարակից առարկաների տվյալներ, նյութեր, որոնք կնպաստեն ԱՌՆ-ի ուսուցման կատարելագործմանը:

Հիմնավորում

ԱՌՆ-ի առջև դրված են լայն խնդիրներ՝ ուսումնական, կրթական, դաստիարակչական, քաղաքացիական դաստիարակության և այլն: Այն ընդգրկում է 2-3 պրոֆիլային առարկաներ և երկու տասնյակից ավելի ոչ պրոֆիլային առարկաներ, որոնք այս կամ այն չափով լրացնում են ԱՌՆ-ն: Այն ուժեղացնում է միջառարկայական կապերը: ԱՌՆ-ի հարցերը հնարավոր է արծարծել բոլոր դասարաններում և շատ կարևոր է ԱՌՆ-ի մշտական զարգացումը, այլ առարկաների հետ միասնականացման ապահովումը, անխզելիության և փոխանցելիության սկզբունքների պահպանումը:

Հուսով ենք, որ “Կրթություն 2015”- ում նման կետի առկայությունը կերաշխավորի ԱՌՆ-ի հետագա ամբողջականացմանը:

Մեր կարծիքով, ծրագրում պետք է լինեն կետեր, որոնք պարզաբանեն կամ ընդգծեն, որ

- կրթական հաստատության անվտանգության ապահովմանը տրվում է հատուկ կարևորություն,
- արտադասարանական պարապունքների, դասղեկական ժամերի մասին խոսք չկա: Իսկ հարցերը այստեղ շատ են, օրինակ՝ 3-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների «Անվտանգ կենսագործունեությունը»,

²³ “Կրթություն 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր”, էջ40, գլուխ 5

- արտադասարանական խմբերի մասին խոսք չկար: Իսկ չէ՞ որ, դրանք ուսումնական, դաստիարակչական զգալի ռեսուրսներ ունեն: Հենց թեկուզ ԱՌՆ-ի համար՝ առաջին բուժօգնության, փրկարարական, հակահրդեհային, համայնքի ռիսկերի ուսումնասիրության, ալպինիստական, բնապահպանական և այլ արտադասարանական խմբեր,
- Նախադպրոցական կրթության հարցերը թերի են, առանձնապես՝ խնդիրների, զարգացման վերաբերյալ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԸՆԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աղետներից բնակչության պաշտպանության կամ թե ԱՌՆ-ի հարցերով ուսուցումը հանրակրթական դպրոցում ունի ուսումնական, դաստիարակչական, անվտանգության կուլտուրայի բարձրացման, քաղաքացիական դաստիարակության և այլ նպատակներ:

ԱՌՆ-ն դա մի առարկա չէ, այլ առարկաների համախմբություն, որն ընդգրկում է 2-3 պրոֆիլային առարկա (“Անվտանգ կենսագործունեություն”, “Առաջին բուժօգնություն”) և առարկաներ, որոնք այս կամ այն չափով ծանոթացնում են, լրացնում, բացահայտում ԱՌՆ-ի տարբեր թեմաների հարցեր:

ԱՌՆ-ն իրականացվում է բոլոր դասարաններում: Թեմաների շրջանակները լայն են՝ կենցաղ, շրջակա միջավայր, բնական երևույթներ, մարդ և մարդու գործունեություն, վերջինիս ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, վտանգներ՝ բնական և մարդածին: Ուսուցման ընթացքում սովորողն աստիճանաբար ինքն է ճանաչում վտանգը, կանխատեսումներ անում, վերլուծում, կարողություններ ձեռք բերում որոշումներ ընդունելու ունակություն, հմտություններ ձեռք բերում աղետի կանխման, պահելաձևի, ինքնօգնության և փոխօգնության: Եվ կարևորը՝ ձևավորվում է ապագա քաղաքացին իր համապատասխան պարտականություններով և իրավասություններով: Նման քաղաքացին երբեք չի կատարի ոխակի ծագմանը, խոցելիությանը նպաստող գործողություններ: Նա պատրաստակամ է և ի վիճակի օգնության հասնելու ցանկացած պահին, ցանկացած իրավիճակում:

Մեր խնդիրն է որոշել ԱՌՆ-ի ներգրավվածությունը տարբեր առարկաներում, գնահատել ըստ առարկայական չափորոշիչների – ուսումնական ծրագրերի – ուսումնական պլանների (ԱԶ – ՈԻԾ – ՈւՊ) հարցադրումները, մեթոդական հաջորդականությունը, ուսումնա-մեթոդական հենքը, և, վերջապես, ԱՌՆ-ի ամբողջականությունը հանրակրթական ծրագրերում:

“Ես և շրջակա աշխարհը” (2-4 դասարաններ):

Մեր կարծիքով, առարկայական չափորոշիչներ → ուսումնական ծրագրեր կապը պահպանվում է: Սակայն նյութը, ըստ մեզ, դասագրքում շատ է խտացված, ինֆորմացիան

շատ է: Կարելի էր ինֆորմացիան նվազեցնել, իսկ պարապմունքները շատ ավելի ինտերակտիվ մեթոդներով անցկացնել, որպեսի սովորողը ինքը մտածի, ճանաչի, որոշի:

Այժմ դասագրքում շոշափվող աղետների մասին (չնայած դասագրքի քննարկումը մեր ծրագրի մեջ չի մտնում, ուղղակի խոսքը մոտեցումների մասին է):

Վտանգների մասին դասագրքում նկարագրությունները, ցուցումները, խորհուրդները շատ են, լավ կլիներ, օրինակ, որ սովորողները իրենք քննարկեին, որոշեին վերելակի հետ կապված վտանգները և դրանցից խուսափումը: Իմաստ չունի, որ 3-րդ դասարանի երեխան տարբերի վտանգավոր սունկերը, բույսերը (մանավանդ, որ երաշխավորելիք օգնությունը սխալներ է պարունակում): Առարկություն ունենք կայծակից, ջրհեղեղից զգուշացման հանձնարարականների նկատմամբ: Իսկ ահա “երկրաշարժը” չի դիմանում քննադատությունների՝ 3 էջ պահելաձև (մտքեր, որոնք թափառում են մի գրքից մի այլ գիրք, մի թեմայից մի այլ թեմա), ավելորդաբանություն կենդանիների վարքի վերաբերյալ: Իսկ ահա մի միտք, որն անպայման պետք էր հաղորդել սովորողին՝ բացակայում է: Դա՝ “երկրաշարժի ժամանակ քանդվում են սխալ կառուցված շենքերը” նախադասությունն է: Սա քաղաքացիական դաստիարակության տարր է: Երեխան պետք է սկսի հասկանալ, որ աղետների ծանր հետևանքները նաև մարդու ոչ ճիշտ գործողությունների հետևանք է:

Հակասական տպավորություն են թողնում “Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր” (ներկայումս “Անվտանգ կենսագործունեություն”) դասղեկական առարկայի (3-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններ) ծրագրերը (ընդամենը 22 ժամ):

Նախ նշենք, որ չկան առարկայական չափորոշիչներ, դասագիրք (դրա տեղը կան նպատակներ, խնդիրներ): 22 ժամ 15 թեմայի համար: Ընդ որում թեմաներից շատերը բավականին բարդ են տվյալ դասարանի համար: Որպես մեղմացուցիչ հանգամանք նշենք, որ կազմելու ժամանակ (10 տարի առաջ), աղետները տարբեր առարկաներում անհամեմատ ավելի քիչ էին ներկայացված:

Թեմաների մեծ մասի ներկայացումը պահանջում է ինտերակտիվ-գործնական ռեժիմ, որին ավելի ժամաքանակ է պահանջում: Միով բանիվ, թեմաների մեծ մասը հնարավոր է մատուցել մենախոսային դասախոսությամբ: Չկա գրականության ցանկ, որից ուսուցիչները կարող էին մասնագիտական նյութեր հավաքել:

Եվ եթե 3-րդ դասարանի առաջին պարապմունքները “մտքերի տարափ” մեթոդով անցկացման համար մեթոդական բազան լիովին ապահովված է, ապա 6-րդ, 7-րդ դասարանների հարցերը նվիրված են բնական և տեխնաձին աղետներին, ավելի բարդ են, իսկ անցկացման համար նյութերը աղքատիկ են: Ցանկալի էր նաև տալ պարապմունքների անցկացման մեթոդները, որոշակի տեղեկություններ, ինչպես նաև գրական աղբյուրներ:

Ի դեպ, 3-րդ դասարանում դասավանդում են դասվարները, որոնք մանկավարժական բուհում որոշակի մեթոդոլոգիական պատրաստություն են անցել: Իսկ ահա 6-րդ և 7-րդ դասարաններում դասավանդում են դասղեկները, որոնք տարբեր առարկաների մասնագետներ են և “ԱԿ”-ի համար պետք է հատուկ նախապատրաստվեն:

Շատ օգտակար կլինեն 3-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների “ԱԿ”-ի համար գոնե ուսուցչի ձեռնարկի պատրաստումը:

“Անվտանգ կենսագործունեություն” (8-րդից 11-րդ դասարաններ) առարկայի ժամաքանակը տարիների ընթացքում նվազել է հասել 16 ժամի: Բայց ահա թեմաների քանակը գրեթե չի պակասել: Առարկայի չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը իրար չեն հակասում: Ուղղակի չի համապատասխանում հատկացված ժամաքանակը: Բերված նյութը կարող է մատուցվել միայն մենախոսային դասախոսությամբ: Ըստ երևույթին, այստեղ նաև հաշվի չի առնվել կարևոր հանգամանք՝ առանձնապես օգտակար կարողություններ և հմտություններ հաղորդող նյութերը պետք էր մատուցել ինտերակտիվ ռեժիմով: Նշենք, որ դասագրքերում բերված բոլոր նյութերն էլ օգտակար են, ուղղակի դրանց արդյունավետ մատուցումն է պրոբլեմատիկ: Դրան ավելացնենք նաև, որ համապատասխան կաբինետները, դասասենյակները խիստ աղքատիկ են:

Պատկերն ինչ որ չափով աբսուրդային է “Առաջին բուժօգնության” առարկայում: Բարձր, խիստ չափորոշիչներ, դրանց համապատասխան ուսումնական պլաններ: 18 ժամ ժամաքանակի համար առաջարկվածները, ըստ մեզ, լոկ բարի ցանկություններ են: 18 ժամում հազիվ հնարավոր է մենախոսային ձևով ներկայացնել նյութը, առանց գործնական աշխատանքի, առանց սովորողների մասնակցության:

Այստեղ ըստ առողջապահության մասնագետ Ա. Վիրաբյանի, նման ժամաքանակի պայմաններում չափորոշիչների վերանայումը պարտադիր է: Առարկան պետք է ձգտի

առաջացնել ցանկություն, հետաքրքրասիրություն, զարգացնի արագ կողմնորոշումը, մատչելի հմտություններին տիրապետում: Եվ գլխավորը՝ չվնասել մարդուն:

Լիարժեք չեն “ԱՓՕ”-ի դասասենյակները, արդյունավետ լուծում դեռևս չի ստացել դասավանդողի հարցը:

Դրական գործոն պետք է համարել “ԱՓՕ”-ին լրացնող “Կենսաբանություն” առարկան (7-12-րդ դասարաններ): Համապատասխան լրացումները ցանկալի է ավելի խորացնել:

Խորը գիտելիքներ են տալիս բարձր դասարանների ֆիզիկայի, քիմիայի խորացված դասընթացները, որոնց մասին մեր կարծիքը փոքր ինչ հակասական է (կարդացվում է ճառագայթային պաշտպանության թեմայից հետո):

ԱՌՆ-ի ամբողջության մեջ առկա և հնարավոր կապերը կարելի է և շարունակել: Սակայն բավարարվենք թվարկածով:

Լինենք օբյեկտիվ և արդարամիտ. նախորդ տարիների համեմատ (մոտ 10 տարի) հսկայական աշխատանք է տարվել և ԱՌՆ-ում զգալի առաջընթաց կա՝ և թեմատիկ առումով, աղետների տեսակների ընդգրկումով, և այլ հարցերով: Սակայն, հաշվի առնելով, որ ԱՌՆ-ի ներուժը և դերը դպրոցական համակարգում անհամեմատելի ավելի մեծ են, որոնք պետք է իրականացնել, ուստի մեր ուշադրությունը հիմնականում, հարկ ենք համարել ուղղել թերություններին, բացթողումներին:

Բայց նշենք, որ մեր դիտարկումներով սակավ աղետներ չեն դիտարկվում:

Կատարվել է ԱՌՆ-ի հարցերը պարունակող նաև այլ առարկաների առարկայական չափորոշիչների և ծրագրերի դիտարկում: Դիտարկվել են “Բնագիտություն” (5-րդ, 6-րդ դասարաններ), “Աշխարհագրություն” (6 - 12-րդ դասարաններ, “Կենսաբանություն” (7 - 12-րդ դասարաններ), “Հայրենագիտություն” 5-րդ դասարան, “Ֆիզիկա” 7-9-րդ դասարաններ, “Քիմիա” (7-12-րդ դասարաններ), “Հայոց պատմություն” (6-12-րդ դասարաններ): Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ԱՌՆ-ի հարցերը այդ առարկաներում և ընդհանրապես հանրակրթական դպրոցների որոշ առարկաներում ներկայացված են: Բայց և շատ աղետներ (ՀՀ-ին բնորոշ) չեն ներկայացված: Օրինակ սողանք, սելավ, փլուզում, լանջային լվացում, օդերևութաբանական մի շարք վտանգավոր երևույթներ և այլն: Գերակշռում են տեսական գիտելիքները, սակավ ուշադրություն չի դարձված աշակերտների մոտ կարողությունների, հմտությունների զարգացման վրա: Միջառարկայական կապերը հիմնականում վատ են դրսևորված, գիտելիքների

ձևավորման անխզելիության և փոխանցելիության սկզբունքները ոչ միշտ են պահպանվում:

Կենցաղային վտանգները, հակահրդեհային և երթևեկության կանոնների պահպանման թեմաները լիարժեք չեն ներկայացված: Այնինչ, դրանք տարբեր առարկաների միջոցով կարելի էր զարգացնել (ուղղակի, թեթևակի):

Բնագիտություն 5-6-րդ դասարաններ:

Երկրաշարժը ուսումնասիրելու ժամանակ շեշտադրումը, ըստ մեզ, պետք է դրվի ոչ թե ֆիզիկական երևույթի (5-րդ դասարանի երեխայի համար դա կարող է մատչելի չլինել), այլ երկրաշարժը որպես վտանգավոր երևույթ ներկայացնելու վրա: Սակայն առարկայական չափորոշիչում և ծրագրում ճիշտ հակառակ պատկերն է. **“Պատկերացում ունենա երկրաշարժի և հրաբուխի առաջացման պատճառների մասին: Իմանա երկրաշարժի ուժի չափման մասին, դրանից պաշտպանվելու տարրական կանոնները: Կարողանա պատկերել Երկրի ներքին կառուցվածքը, ճանաչել Հայաստանում առավել տարածված հրային, նստվածքային և փոխակերպային ապարները, պատկերել երկրաշարժի և հրաբխի կառուցվածքը”**²⁴ Լավ կլիներ, որ աշակերտները վերլուծեն, թե որոնք են երկրաշարժի հետևանքով մեծաթիվ մարդկային զոհերի պատճառները (շենքերի սխալ նախագծում, կառուցապատում, շինարարական աշխատանքների անբարեխիղճ իրականացում, բնակիչների կողմից իրենց բնակարանների և տների ոչ մասնագիտական ձևափոխում, վերակառուցում և այլն): Ինչպե՞ս կարելի է նվազեցնել երկրաշարժի ավերիչ հետևանքները և մարդկային զոհերը, ինչպես գործել երկրաշարժի ժամանակ և հետո: Իսկ ի՞նչ է նշանակում չափորոշիչում գրված **“...դրանից պաշտպանվելու տարրական կանոնները”**:²⁵ Դա մեր կարծիքով կոռեկտ ձևակերպում չէ: Ճիշտ կլիներ ձևակերպել այսպես **“... Իմանա և կարողանա գործել երկրաշարժի ժամանակ և փլատակների տակ մնալու դեպքում”**: Չափորոշիչում, չգիտես ինչու, վտանգի ժամանակ գործելու կարողությունների և հմտությունների մասին խոսք անգամ չկա, մինչդեռ, երկրաշարժի ժամանակ միայն ընդհանուր տեսական գիտելիքները շատ ու շատ քիչ են:

“Բնագիտություն” 6-րդ դասարանի “Նյութերի փոխակերպում” բաժնում ներկայացված է այրումը: Առարկայական չափորոշիչի համաձայն աշակերտին

²⁴ “Բնագիտություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր, էջ 14

²⁵ “Բնագիտություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր, էջ 14

մատուցվում է միայն այրման քիմիական ռեակցիան և ոչ մի խոսք չկա կրակի, հրդեհի հետ կապված վտանգների մասին. “...*Բմանա՝ այրումը ջերմությամբ և լույսով ուղեկցվող քիմիական ռեակցիա է: Գիտակցի այրման օգտակարությունը և վնասակարությունը:*” Իսկ ծրագրում այդ մասին չկա; Միայն բարձր մակարդակի խմբում կա այսպիսի ձևակերպում. “*Բմանա՝ հրդեհները հանգցնելու միջոցները, հրդեհավտանգ նյութերը*”:²⁶ Ինչու՞ միայն բարձր մակարդակի գիտելիքների պահանջն է դա, միթե նվազագույն գիտելիքների մակարդակի համար պետք չի իմանալ հրդեհը հանգցնելու միջոցների մասին: Հրդեհները ամենատարածված կենցաղային վտանգներից են, ուստի նման անտեսումը անթույլատրելի է: Մեր կարծիքով, աշակերտը պարտադիր պետք է իմանա հրդեհի առաջացման հիմնական պատճառները և հետևանքները, կարողանա արագ կողմնորոշվել և հստակ գործել հրդեհի ժամանակ: Ցավոք, այդ ամենը արտացոլված չէ ոչ առարկայական չափորոշիչում, ոչ էլ ծրագրում:

Բնապահպանական հիմնահարցերը ներկայացված են բավարար ծավալով: Սակայն պետք է նշենք, որ գերակշռում են համաշխարհային բնապահպանական խնդիրները: Քիչ անդրադարձ կա Հայաստանին բնորոշ բնապահպանական հիմնախնդիրներին: Ըստ մեզ, կարելի էր ավելի մեծ ուշադրություն դարձնել Հայաստանի Հանրապետության բնապահպանական հիմնահարցերին:

“Ջերմային, էլեկտրական և մագնիսական երևույթներ” բաժնում ներկայացված են էլեկտրական հոսանքը և կայծակը: Առարկայական չափորոշիչում և ծրագրում խոսք անգամ չկա էլեկտրական հոսանքի և կայծակի հետ կապված վտանգների մասին. պարտադիր նվազագույն մակարդակ՝ “...ինչ է էլեկտրական հոսանքը, էլեկտրական հոսանքի ազդեցությունները, ինչ է կայծակը...”, միջին մակարդակ “...Գիտենա տնային էլեկտրական սարքերից օգտվելու կանոնները, ինչպես պաշտպանվել կայծակից”:

Այսպիսով, պարզ է, որ բնագիտություն առարկան լիարժեք չի լրացնում “Անվտանգ կենսագործունեություն” առարկային, փոխանցելիությունը և միջառարկայական կապերը թույլ են:

²⁶ “Բնագիտություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր, էջ 19

Աշխարհագրություն 6-12 -րդ դասարաններ.

ԱՌՆ-ի թեմաները սկսում են 9-րդ դասարանից; Ամբողջությամբ 9-րդ դասարանը նվիրված է Հայաստանին: Չափորոշիչ → ծրագիր → ուսումնական պլան կապը առկա է, սակայն բովանդակության առումով շտկելու կարիք է զգացվում:

Օրինակ՝ չափորոշիչում գրված է “...*Իմանա* հայտնի երկրաշարժերը և հրաբուխները, ...”²⁷, ծրագրում՝ “... Սեյսմիկությունը և հրաբխությունը: ...”²⁸ Տրված է շատ անորոշ, լայն մեկնաբանությունների տեղ է թողնված: Մեր կարծիքով կարելի է ընդլայնել հարցադրումը, օրինակ. “... Իմանա որոշ հայտնի երկրաշարժերը, դրանց հետևանքները, դասերը և եզրակացությունները”:

Եվս մեկ նկատառում. 8-րդ դասարանի “Անվտանգ կենսագործունեությունում” երկրաշարժն արդեն իսկ բավականին լավ է ներկայացված: Աշխարհագրության դասընթացը, փաստորեն, չի կարող լրացնել “Անվտանգ կենսագործունեությանը”, քանի որ համապատասխան թեմաները անցնում են 8-րդ դասարանի “Անվտանգ կենսագործունեությունից” հետո: Այստեղ արդեն փոխանցելիության և անխզելիության սկզբունքը չի գործում: Ճիշտ կլիներ, որ 9-րդ դասարանի “Աշխարհագրություն” առարկայի առարկայական չափորոշիչները, ծրագրերը և դասագիրքը լրացնեն և զարգացնեն այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք ձեռք են բերվել 8-րդ դասարանի “Անվտանգ կենսագործունեության” դասերի ժամանակ: Այս ձևով կարելի է ամրացնել միջառարկայական կապը և պահպանել փոխանցելիության սկզբունքը:

10-րդ և 11-րդ դասարաններում “Աշխարհագրություն” առարկան ամբողջությամբ նվիրված է բնօգտագործման և բնապահպանական հիմնահարցերին:

Ֆիզիկա 7-12 –րդ դասարաններ.

“Ֆիզիկա” առարկայում ևս առկա են ԱՌՆ-ի հարցերը: Դրանք են՝ էլեկտրական հոսանքը և դրա հետ կապված վտանգները, միջուկային ֆիզիկան և վտանգները: Առարկայական չափորոշիչ → ծրագիր կապը փոքր ինչ թերի է: Ծրագրի մեջ

²⁷ Հանրակրթական հիմնական դպրոցի “Աշխարհագրություն” և “Հայաստանի աշխարհագրություն” առարկաների չափորոշիչներ և ծրագրեր էջ 29

²⁸ Հանրակրթական հիմնական դպրոցի “Աշխարհագրություն” և “Հայաստանի աշխարհագրություն” առարկաների չափորոշիչներ և ծրագրեր էջ 47

“Էլեկտրական երևույթներ” բաժնում նշված է կայծակի և շանթարգելման մասին, սակայն առարկայական չափորոշիչում ոչինչ չի ասված ոչ կայծակի, և ոչ էլ շանթարգելման մասին: Նույնը կարելի է ասել և ֆիզիկայի 11-րդ դասարանի չափորոշիչ → ծրագիր կապի մասին: Ցանկալի է լրացնել այդ բացերը:

“Անվտանգ կենսագործունեությունում” կայծակը լուսաբանված է, սակայն միջառարկայական կապը ֆիզիկայի համապատասխան հարցերի հետ թույլ է: Քանի որ “Անվտանգ կենսագործունեություն” և “Ֆիզիկա” առարկաները կայծակը և շանթարգելումը անցնում են 8 և 9-րդ դասարանում, ապա ցանկալի կլիներ, որ “Անվտանգ կենսագործունեություն” կայծակի և դրա հետ կապված վտանգի թեմաները հաջորդեին “Ֆիզիկայի” համապատասխան թեմաներին:

Ատոմի միջուկի կառուցվածքը և ռադիոակտիվությունը բավականին լավ են լուսաբանված: “Ֆիզիկա” → “Անվտանգ կենսագործունեություն” կապը տեսանելի է: Հիմնավորենք. հենց նույն 9-րդ դասարանի “Անվտանգ կենսագործունեությունում” բերված է ռադիոակտիվ նյութերի արտանետումով վթարների մասին թեման, այնուհետև 10-րդ դասարանում ներկայացված է միջուկային զենքը: Իսկ ահա “Ֆիզիկա” առարկայի 12-րդ դասարանում այդ ամենը եզրափակվում է “ատոմ և ատոմի միջուկ” թեմայով:

Քիմիա 7-12 –րդ դասարաններ.

“Քիմիա” առարկայում ԱՌՆ-ի տեսանկյունից ներկայացված են 11-րդ դասարանում “Ածխածինների բնական աղբյուրները” թեմայով, որտեղ նշված են բնապահպանական խնդիրներ: Այնուհետև 12-րդ դասարանում “Քիմիան և առողջությունը” թեման առնչվում է “Առաջին բուժօգնություն” առարկայի հետ և նկատվում է շարունակականություն: Ուղղակի հաջորդականությունը հաջող չէ:

Կենսաբանություն 7-12 –րդ դասարաններ.

Կենսաբանություն առարկայում չափորոշիչ → ծրագիր → ուսումնական պլան կապն առկա է: Թեմաների օրգանական զարգացում է նկատվում: Բավականին լավ լրացնում է “Առաջին բուժօգնություն” առարկային: Օրինակ՝ 8-րդ դասարանի “Հենաշարժիչ համակարգը”²⁹ նախորդում է “Առաջին բուժօգնության” 10-րդ դասարանի “Հենաշարժիչ

²⁹ “Կենսաբանություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր: էջ 17, 37

համակարգի վնասվածքներ, շոկ:³⁰ Թեմային, 8-րդ դասարանի “Կենսագործունեության գործընթացների կարգավորումը: Զգայարաններ”³¹ նախորդում է “Առաջին բուժօգնության” 10-րդ դասարանի “Վերքեր և վնասվածքներ”³² Թեմային, 8-րդ դասարանի “Միրտ - անոթային համակարգ; Արյան և ավշաշրջանառություն”³³ նախորդում է “Առաջին բուժօգնության” 9-րդ դասարանի “Միրտ- անոթային հիվանդությունների նշանները, առաջին օգնությունը, զարգացմանը նպաստող վտանգի գործոնները: Սրտի կանգ, սրտի աշխատանքի և շնչառության վերականգնում”³⁴ Թեմային, 8-րդ դասարանի “Շնչառական համակարգ”³⁵ Թեման նախորդում է “Առաջին բուժօգնության” 9-րդ դասարանի “Դժվարացած շնչառություն, պատճառները, նշանները, առաջին օգնությունը: Շնչառության կանգ, արհեստական շնչառություն” և “Շնչուղիների խցանում, նշանները, առաջին օգնությունը”³⁶ Թեմաներին:

Ընդհանրացնենք. ԱՌՆ-ն անբողջական և հստակ չէ ներկայացված: Երբեմն գլխավորը երկրորդականից չի տարանջատվում: Մոտեցումը այնքան էլ հայեցակարգային չէ: Նվազ է այն առարկաների թիվը, որոնք կարող էին որոշ չափով լրացնել ԱՌՆ-ի ուսուցումնական հարցերը: ԱՌՆ-ի ուսուցման միասնականությունը կաղում է: Բայց չէ որ հանրակրթական ծրագրերը այս հարցում մեծ ներուժ ունեն:

ԱՌՆ-ն պետք է ունենա 2-3 պրոֆիլային առարկա, որոնց անհրաժեշտ սկզբնական հարցերը այս կամ այն չափով արդեն ներկայացվել են նախորդ դասարանների տարբեր առարկաներում: Այստեղ արդեն առաջանում է լրացնող (“դոնոր”) առարկաների ընտրումը, դրանց հարցերի որոշումը, հորիզոնական և ուղղահայաց կապերի ապահովումը, անխզելիության և փոխանցելիության սկզբունքների ապահովումը:

³⁰ “Նախնական զինվորական պատրաստություն: Հանրակրթական ավագ դպրոցի ծրագիր և չափորոշիչ”, էջ 17, 31

³¹ “Կենսաբանություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր: էջ 14, 35

³² “Նախնական զինվորական պատրաստություն: Հանրակրթական ավագ դպրոցի ծրագիր և չափորոշիչ”, էջ 15, 30

³³ “Կենսաբանություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր: էջ 15, 38

³⁴ “Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն” առարկայի ծրագիր և չափորոշիչ, Երևան 2007, էջ 68, 69, 74

³⁵ “Կենսաբանություն” առարկայի չափորոշիչ և ծրագիր: էջ 16, 39

³⁶ Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն” առարկայի ծրագիր և չափորոշիչ, Երևան 2007, էջ 68, 73, 74

Այստեղ շատ հնարավորություններ են բաց թողնված: Եթե ԱՌՆ-ի ուսումնական հարցերը լրացնող 10-ից էլ նվազ առարկա կա, ապա այն կարելի է անհամեմատ մեծացնել:

Բավարար չէ հանրակրթական դպրոցում ԱՌՆ-ի ուսուցման ամբողջականությունը, ամբողջական նպատակային ուսուցման հիմքը:

Մեր կարծիքով բավարար չէ միացյալ թիմային աշխատանքը, որը քննարկել է բոլոր առարկաները: Միջառարկայական կապերը տարերային են:

Անբավարար է մասնագետ մեթոդաբանի ներկայությունը, որը կսահմանափակեր ավելորդ, ոչինչ չասող նյութերով բեռնվածությունը:

Պատահում է անխզելիության և փոխանցելիության սկզբունքների խախտում, որը բերում է կրկնողությունների, անհամակարգվածություն է առաջացնում:

Առարկայական չափորոշիչներ և ուսումնական ծրագրեր կազմողները երբեմն հաշվի չեն առել ժամային բեռնվածքները:

Էական թերություն է ուսուցման ժամանակակից մեթոդների լայն կիրառման պայմանների սահմանափակությունը:

Չնայած մեր կողմից նշված օբյեկտիվ կամ սուբյեկտիվ դիտողություններին՝ որոնք էականորեն նվազեցնում են ԱՌՆ-ի լիարժեքությունը, վիճակը միանգամայն շտկելի է, որի համար առկա են բազմաթիվ հնարավորություններ: Նշենք դրանցից առավել իրատեսականները և էականները.

- Առանձին առարկաների ժամային բեռնվածքների փոփոխություն և ըստ այդմ առարկայական բեռնվածքների և ուսումնական պլանների վերանայում
- Որոշ առարկայական չափորոշիչների մեղմացում.
- Միջառարկայական կապերի ընդլայնում և խորացում.
- Ինտեգրվող առարկաների թվի էական մեծացում.
- Արտադասարանական պարապմունքների արդյունավետության բարձրացում:

5. Դպրոցի մակարդակով աղետների ռիսկի նվազեցման և կառավարման ոլորտում առկա մարդկային կարողությունների գնահատում

Դպրոցները համարվում են վտանգավոր օբյեկտներ: ԱՌՆ-ի տեսանկյունից, դպրոցի գլխավոր խնդիրն է սովորողների և անձնակազմի անվտանգության ապահովումը տարբեր պատահարներից, ԱԻ-երից:

Հանրակրթական դպրոցները մարդկային կուտակումներով օբյեկտներ են (ՄԿՕ), որոնք մենք դիտարկում ենք սովորողների և անձնակազմի անվտանգության տեսակետից:

ՄԿՕ-ն դրանք կառուցվածքներ են, շինություններ, որտեղ օրվա որոշակի ժամերին գտնվում են մարդկանց զգալի խմբեր:

Տարբեր վտանգներից բնակչության անվտանգության տեսանկյունից դրանք առավել ռիսկային են մի շարք պատճառներով՝

- խոցման դեպքում տուժածների մեծ թիվ.
- շարժման, մանևրելու դժվարություն, սահմանափակ հնարավորություններ.
- դուրս գալու ուղիների խցանում, տարահանվելու դժվարություն.
- տագնապ, խուճապ:

Դպրոցի շենքում որոշակի ժամանակահատվածում որոշակի ծավալներում (դասասենյակներ) գտնվում են որոշակի տարիքային խմբեր: Այսինքն, ամենափոքր տարիքից մինչև հասուն տարիք:

Դպրոցում անվտանգությունը կարելի է դիտել 3 գոտիում՝ դպրոցական մասնաշենք, բակ և սպորտհրապարակ, մերձակայք (փողոց, գետ, դաշտ և այլն):

Վտանգները կարող են լինել ներքին և արտաքին, բնական, տեխնածին, սոցիալ-կենսաբանական և սոցիալածին: Էական գործոն են նաև շենքի և դրա տարրերի կայունությունը:

Կարողություններ – նպաստել բնական և տեխնածին աղետների ուսումնասիրությունների, վերլուծությունների, դիտարկումների հնարավորության դեպքում կանխատեսումներ կատարել հնարավոր աղետների, խոցումների վերաբերյալ. նպաստել անհրաժեշտ տվյալների շտեմարանների ստեղծմանն ու դրանց կատարելագործմանը, ուսումնասիրությունների, տեխնիկական կարողությունների միջոցով հասնել ռիսկի գնահատման ազդարարման բարելավմանը. վիճակագրական տվյալների, վտանգների քարտեզա-

գրման, վերլուծությունների, կորուստների միջոցով հասնել ռիսկի գնահատման և մոնիթորինգի ընդհանրական մեթոդների մշակմանը:

Եվ, իհարկե, ամեն տեսակի աղետների, վթարների կանխատեսումների, խոցելիությունների, աղետի ռիսկի ծագման, ռիսկերի որոշման, վաղ ազդարարման համար անհրաժեշտ են ամենօրյա կամ պարբերական դիտարկումներ, մոնիթորինգ, տվյալների շտեմարան, գնահատման մեթոդիկաներ, վերլուծություններ:

5.1. Դասավանդողներ

Հանրակրթական դպրոցը հանձինս մանկավարժական կազմի և սպասարկող անձնակազմի ունի մարդկային, մասնագիտական, մանկավարժական լուրջ ռեսուրսներ, կարողություններ:

Ավելորդ մանրամասնություններից խուսափելու համար նշենք, որ վերը նշված համապատասխան դիտարկումները, վերլուծությունները, գնահատումները, կանխատեսումները կարող են կատարել համապատասխան մանկավարժները (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, բնագիտություն, տեխնոլոգիա և այլն), մասնագետները: Որոշ մանկավարժներ կարող են մշտական կապ պահպանել համապատասխան տարածքային կառուցվածքների հետ (Հիդրոմետ, ՀՓԾ, Հակահրդեհային ծառայություն, Մանկադպրոցային և այլն): Համապատասխան դիտարկումների համար պիտանի են նաև սպասարկող անձնակազմի համապատասխան մասնագետները (Էլեկտրիկ, հյուսն և այլն): Մի խոսքով՝ մի աբողջ միացյալ թիմ:

5.2. Դպրոցի անվտանգություն

Հանրակրթական դպրոցին սպառնում են ամենատարբեր տեսակի բնական, տեխնա-ծին և այլ վտանգներ. երկրաշարժեր, ջրհեղեղներ, սողանքներ, սելավներ, ուժեղ քամիներ, խոշոր կարկուտներ, տեղատարափ անձրևներ, ուժեղ ձյունատեղում, ուժեղ սառնամանիք, ուժեղ շոգ, հրդեհներ, տրանսպորտային, քիմիական, ճառագայթային վթարներ (հիմնականում վտանգավոր օբյեկտների շրջակայքում), վարակիչ հիվանդություններ, վթարներ էլեկտրաէներգետիկական և կենսապահովման կոմունալ համակարգերում, սոցիալադին բնույթի երևույթներ, դեպքեր, պատահարներ և այլն:

Վերոնշյալ վտանգների քարտեզը, ցուցակը կազմում է միացյալ թիմը:

Դպրոցի անվտանգության համար պատասխանատու է դպրոցի տնօրենը, որը դպրոցի հանձնաժողովի նախագահն է, իսկ շտաբի պետը՝ զինղեկը:

Դպրոցի միացյալ թիմը շտաբի պետի ղեկավարությամբ մշակում է դպրոցի խոցելիության նվազեցմանը ուղղված միջոցառումներ:

Ստեղծվում է համապատասխան նյութատեխնիկական բազա աղետի կանխարգելման, արձագանքման համար:

Վտանգների վերացումը, նվազեցումը, խոցելիության նվազեցմանն ուղղված միջոցառումները դպրոցը հիմնականում իրականացնում է սեփական ուժերով: Թերևս միայն շենքի կոնստրուկցիոն խախտումների և այլ առանձնահատուկ վտանգների համար դպրոցը դիմում է վերադաս մարմինների:

Վերը նշված միջոցառումներին ներգրավվում են նաև բարձր դասարանների աշակերտները:

Կարևոր նշանակություն ունի նաև սովորողների ու ուսուցիչների ուսուցումը հնարավոր աղետների ժամանակ գործողություններին: Դրանց իսկությունը ստուգվում է վարժանքների միջոցով:

Կա ԱԻ պլան, որտեղ նշված են ԱԻ և հիմնական միջոցառումների օրացույցային ծրագիրը: Ծրագրում նշված է տարբեր ԱԻ-ում միջոցառումների անվանումները, կատարման ժամկետը, պատասխանատուները: ԱԻ պլանը հաստատում է հանձնաժողովի նախագահը:

Մեր կարծիքով, դպրոցների ԱԻ պլանները ներկայիս վիճակով չեն կարող ապահովել դպրոցի անվտանգության հետ կապված բոլոր հարցերի ներկայացումը, պարզաբանումը:

Առաջարկվում է դպրոցում ստեղծել “անվտանգության ծնողական խորհուրդ” (ԱԾԽ): ԱԾԽ-ի հիմնական գործառույթն է դպրոցի անվտանգության վիճակի պարբերական ստուգումը, տնօրինությանը համապատասխան ահազանգեր հաղորդելն ու հետևելը, որ նկատված խոցելիությունները վերացվեն (և ինքը նույնպես օժանդակի):

ԱԾԽ-ը կարող են զգալի առաջընթաց ապահովել այս բնագավառում:

Չի բացառվում նման խորհրդի ստեղծումը հանրապետական մասշտաբով և նրա ինտեգրումը Եվրոպական համապատասխան կառույցին:

Ստեղծվում է համապատասխան նյութատեխնիկական բազա աղետի ծագման դեպքում դիմակայողի համար: Մշակվում են դպրոցի խոցելիության նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Դպրոցի անվտանգության համար պատասխանատու է տվյալ դպրոցի տնօրենը, որը հաստատում է ԱԻ պլանը, որտեղ նշված է ԱԻ և հիմնական միջոցառումների օրացույցային ծրագիրը: Ծրագրում նշվում են տարբեր արտակարգ իրավիճակներում միջոցառումների անվանումները, կատարման ժամկետը, պատասխանատուները: Մանկավարժական կազմից և ավագ դասարանի աշակերտներից կազմվում են խմբեր (օղակներ), որոնց հետ կատարվում է լրացուցիչ ուսուցում և միջոցառումներ: Դրանց իսկությունը ստուգվում է վարժանքների միջոցով:

Այստեղ էական է նաև արտադասարանական համապատասխան խմբերի դերը:

5.3. Նյութատեխնիկական բազա

Անվտանգության բարձրացման և ուսուցմանն օժանդակելու համար դպրոցում անհրաժեշտ են՝ դպրոցի ամեն հարկում 2-ական կրակմարիչ (ОХВП-10 (огнетушитель химический, воздушный, пенный)), շենքի ներքին ջրամատակարարման խողովակներ (որոնք մշտապես լինեն 3-4 մթնոլորտ ճնշման տակ), յուրաքանչյուր հարկում պետք է տեղակայվեն հրշեջ ծորակներ համապատասխան փողորակների գլխիկներով: Թեք տանիքը պետք է ունենա անվտանգության ճաղեր (h=60սմ): Առաջին հարկի պատուհանների ճաղավանդակները չպետք է լինեն խուլ ամրացված:

“ԱԲՕ”-ի համար՝ լարան (ժգուտ) 3-4 հատ, ստերիլ վիրակապ 8-10 վիրակապ, բեկակալ (շինա)- օդային և կոշտ, առնվազն 3 գույգ:

“ԱԿ”-ի համար՝ շնչառական օրգանների և մաշկի պաշտպանման համար քաղաքացիական ГП-76, ГП-76, ПДФ-2 (детский/школьный) յուրաքանչյուրից 3-ական հատ:

Անհրաժեշտ են համապատասխան պաստառներ և մակետներ:

6. Երաշխավորություններ և առաջարկություններ հանրակրթական դպրոցում աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման բարելավման համար

“Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում” Հյոգոի 2005-2015 գործողությունների ծրագրի գործողությունների գերակայություններից 3.-ն ասում է՝ օգտագործել գիտելիքը, նորարարությունները և կրթությունը **բոլոր մակարդակներով անվտանգության և դիմակայության մշակույթ** ձևավորելու համար: Այստեղ նշվում է՝ խրախուսել աղետների ռիսկերի նվազեցմանը վերաբերվող ուսումնական նյութերի ընդգրկումը դպրոցների ուսումնական ծրագրերի համապատասխան բաժիններում ... Նպաստել ՄԱԿ-ի՝ “Կրթություն հանուն կայուն զարգացման. 2005-2015թթ. տասնամյակ” ծրագրում աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչի ընդգրկմանը և այլն:

Տարբեր ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններում ԱՌՆ-ի (աղետների ռիսկի նվազեցման) ուսումնական ծրագրերից ընդգրկման անհրաժեշտության մասին կետ է մտցված նաև ՆԱՏՈ-ի (2010, Երևան) “Աղետների կանխարգելման հարցերում սոցիալական և մարդկային գործոնների զարգացումը” գիտաժողովի որոշման մեջ:

Նման հստակ պահանջների առկայության դեպքում ԱՌՆ-ի ուսուցումը դպրոցներում պետք է լիներ համակարգված, հիմնավորված և որոշակիորեն միասնականացված տարբեր երկրներում:

ԱՌՆ-ի ուսուցումը բացի անվտանգ կենսագործություննությունից փաստորեն ավելի լայն խնդիրներ կարող է լուծել դպրոցում՝ քաղաքացիական դաստիարակություն, մարդասիրական գաղափարների և գործողությունների շուրջ տարբեր առարկաների համապատասխան թեմաներ, հարցերի համախմբում, ստեղծել հասարակության ակտիվ, օրինապահ անդամ, որը երբեք չի նպաստի ռիսկի և խոցելիության աճին, իսկ անհրաժեշտության դեպքում պատրաստ է և ունակ ինքնօգնության և փոխօգնության:

Մեր համոզմունքով, ԱՌՆ-ի ուսուցումը ոչ թե լոկ սովորողին այս կամ այն վտանգից (թեկուզ տարածված) պաշտպանվելու ուսուցման համար է, այլ նաև լիարժեք, ակտիվ քաղաքացու պատրաստման, որն ի վիճակի է ցանկացած իրավիճակում արագ կողմնորոշվել, իրադրությունը գնահատել, որոշում ընդունել և ինքնօգնություն,

փոխօգնություն իրականացնել: Փաստորեն, ԱՌՆ-ի ուսուցումը տալիս է ոչ միայն գիտելիքներ, կարողություններ, հմտություններ այլ նաև մարդկային կողմնորոշումներ: Իսկ այսպիսի ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է հատուկ առարկա, առարկայախումբ՝ առանց այլևայլ շեղումների: Ուրիշ բան, որ այդ հատուկ առարկան իր դերը կատարելու է մնացած առարկաների օգնությամբ, դրանց հետ համակարգված:

Ասվածի և վերը բերվածների հիման վրա ներկայացնենք մեր նկատառումները, երաշխավորությունները հանրակրթական դպրոցում ԱՌՆ-ի բարելավման համար:

6.1. ԱՌՆ-ի և ուսումնառության ուսումնամեթոդական առանձնահատկություններ.

Հնարավորինս նվազեցնել մենախոսային դասախոսությունները և առավելագույնս օգտագործել ուսուցման ինտերակտիվ խաղարկային մեթոդները: Սովորողը առավելագույնս ինքը պետք է ճանաչի վտանգները, որոշի կանխարգելման ուղիները, պահելաձևը:

6.2. Այլ առարկաներում աղետների ներկայացման մասին.

Որոշ աղետների վերաբերյալ ճշգրտել ռիսկի նվազեցման ուղիների բացահայտումը համաձայն դրանց նշանակության, արդյունավետության: Օրինակ, երկրաշարժը. մենք նույնիսկ ճիշտ չենք ընկալել Սպիտակի երկրաշարժի դասերը, աշակերտները պետք է պարզ պատկերացնեն, որ բնակչության պաշտպանության հիմնական ուղին դա կառուցվածքի սեյսմակայունությունն է, որն ապահովվում է համապատասխան նախագծմամբ, շինարարությամբ և շահագործմամբ: Մինչդեռ, հաճախ, առավել մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման համար ավելի մատչելի հարցի՝ երկրաշարժի ժամանակ բնակչության պահելաձևին:

Կառուցվածքի սեյսմակայունության ապահովման համար անհրաժեշտ է պրոֆեսիոնալիզմ, պատասխանատվություն, պարտաճանաչություն, օրինապահություն, հասարակական ակտիվություն և այլն:

Թեմաներ պետք է նվիրել Հայաստանի համար և ընդհանրապես լուրջ նշանակություն ունեցող հարցերին. օրինակ՝

- *Արարատյան դաշտավայրի հողերի ճահճացումը.*
- *լանջերի անապատացումը.*
- *ջրային մակերեսներ և վտանգները,*
- *գլոբալ հիմնահարցերը որպես արտակարգ իրավիճակների աղբյուր:*

Տվյալ բնակավայրին բնորոշ աղետների պետք է հատկացնել հատուկ ուշադրություն:

Ցանկալի է, որ որոշ վտանգների (կենցաղային անվտանգության, հրդեհային անվտանգության, երթևեկության կանոնների, բնության պահպանության) հարցերը համապատասխան չափաբաժիններով ներկա լինեն առաջին դասարանից սկսած տարբեր առարկաների ուսումնական ծրագրերում էլ մինչև բարձր դասարաններ:

6.3. ԱՌՆ-ի ուսուցման չափորոշիչների հստակեցում և գնահատում:

Մրանք շատ կարևոր հարցեր են, որոնք լուրջ ինտեգրացված աշխատանք են պահանջում: Վերջինիս կհաջորդի առարկայական չափորոշիչներ-ծրագրերի ճշգրտումը:

6.4. ԱՌՆ-ի ուսուցման բարելավման ուղիները

6.4.1. Պրոֆիլային առարկաների ժամաքանակների մեծացում.

6.4.2. Միջառարկայական կապերի ընդլայնում.

6.4.3. Արտադասարանական խմբերի կազմակերպում.

6.4.4. Որոշ առարկայական չափորոշիչների վերանայում.

6.4.5. Դասղեկական ժամերի անցկացման բարելավվում

6.4.6. Ուսուցանողների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում:

6.4.1. Պրոֆիլային առարկաների ժամաքանակների մեծացում.

Հարցի լուծումը կապված է մի շարք գործոնների հետ, ուստի նվազ իրատեսական է:

6.4.2. Միջառարկայական կապերի ընդլայնում.

Այստեղ հնարավորությունները լայն են:

Առաջարկվում է “ԱԿ”-ին և “ԱԲՕ”-ին նախորդող այլ առարկաներում մտցնել հարցեր, որոնք լրացնում են, ծանոթացնում, պարզաբանում են, բացատրում “ԱԿ”-ի և “ԱԲՕ”-ի առանձին թեմաները: “Տեխնոլոգիա”, “Ես և շրջակա աշխարհը”, “Աշխարհագրություն”, “Բնագիտություն”, “Կենսաբանություն”, “Ֆիզիկա”, “Քիմիա” առարկաներին կարող են ավելանալ նաև “Կերպարվեստը” (1 պարապմունք՝ նվիրված կենցաղային կամ այլ վտանգի պատկերմանը), “Երաժշտությունը”, “Ֆիզկուլտուրան” (փրկարարական տարրերի, հոգեբանական վերականգման վարժությունների ուսուցում), գրականությունները

(դասական գրողից բացի, ո՞վ կարող է ավելի պատկերավոր ներկայացնել աղետը), պատմությունները (խոշոր աղետների դասերը), “Ինֆորմատիկա”, “Հասարակագիտություն”, “Հոգեբանություն”, “Քաղաքացիական կրթություն”, “Հայ եկեղեցու պատմություն” (հայ հոգևորականը կրիտիկական պահերին միշտ եղել է իր ժողովրդի հետ):

6.4.3. Արտադասարանական խմբերի կազմակերպում.

Ուսուցման գործնական հմտությունների, կարողությունների հաղորդման, նախասիրական ինքնադրսևորման, ինչպես նաև դպրոցի անվտանգության ապահովման լավագույն միջոցներ են արտադասարանական խմբերը, որոնց գործունեությունը վերջերս նվազել է: Դրանց թվում կառաջարկենք փրկարարների, ԱԲՕ-ի, ռիսկի քարտեզի կազմման խմբեր:

6.4.4. Որոշ առարկայական չափորոշիչների վերանայում.

Կոնիտարկվեն միայն ԱՌՆ-ի ուսուցման բլոկի առարկայական չափորոշիչները:

6.4.5. Դասղեկական ժամերի անցկացման բարելավվում

Առարկայական չափորոշիչներ- ծրագրերի ստեղծում:

Դասղեկների դասընթացների իրականացում:

Ուսուցչի ձեռնարկի ստեղծում:

Լրացուցիչ մեթոդական նյութերի մշակում:

6.4.6. Ուսուցանողների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում:

Այստեղ հարցերը շատ են: Ո՞վ է դասավանդելու ԱԲՕ-ն՝ բուժքույրը, զինղեկը, թե՞ մանկավարժական բուհում հատուկ դասընթաց անցած և համապատասխան վկայական ստացած մասնագետը: Հարցը հստակ լուծումներ դեռևս չունի:

ԱԿ-ի դասավանդման համար զինղեկները պետք է անցնեն հատուկ դասընթաց: Իսկ հետագայում մտածել այդ ուղղությամբ բարձրագույն կրթությամբ մասնագետ պատրաստելու մասին:

“ԱԿ”-ի մասնագետ պատրասման բուհական ծրագրերը հիմնովին վերանայման կարիք ունեն:

6-րդ, 7-րդ դասարանների դասղեկների համար “ԱԿ” դասավանդելու համար անհրաժեշտ է կազմակերպել հատուկ դասընթաց:

Հանրակրթական դպրոցների դասվարների, դասղեկների, զինղեկների, փոխտնօրենների և տնօրենների վերապատրաստումը ԱՌՆ-ի գծով պարտադիր է: Այն իրականացվում է ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ում: Ատեստացիան պետք է լինի պարտադիր՝ ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՌՆ-ի ուսուցումը մեծ ներուժ ունի: Դրա հնարավորությունները սովորողի անվտանգության մշակույթի բարձրացման, քաղաքացիական դաստիարակության, հասարակության ակտիվ անդամի ձևավորման ուղղությամբ դեռևս լիարժեք չեն օգտագործվում: ԱՌՆ-ի ուսուցման թեմաները գրեթե բոլորը մարդասիրական կողմնորոշումներ ունեն:
- ԱՌՆ-ի լիարժեք ուսուցումը հնարավոր ենք համարում 2-3 պրոֆիլային առարկաների և մի ամբողջ շարք առարկաների ինտեգրման միջոցով, ստեղծելով մի ամբողջականություն.
- Հայաստանի Հանրապետությունում ԱՌՆ-ի ուսուցման կատարելագործման համար կառուցվածքային փոփոխությունների կարիք չկա: Անհրաժեշտություն կա ուսուցման իրավական-նորմատիվային-մեթոդական փոփոխությունների.
- ԱՌՆ-ի ուսուցման համալիրը մեծ ավանդույթներ չունի: Առկա է ուսումնամեթոդական աշխատանքների կատարման մեծ ճակատ:

Խնդիրների լուծման համար առաջարկվում է

1. Աշխատանքային հանձնաժողովի ստեղծում ԿԳՆ-ի, ԱԻՆ-ի, ԱՆ-ի մասնագետներից. հանձնաժողովի խնդիրների թվում կլինեն՝

- ԱՌՆ-ի ուսուցման պրոֆիլային առարկաների և այլ առարկաների միջառարկայական կապերի որոշումը,
- ԱՌՆ-ի ուսուցման համալիրին վերաբերող թեմաների շրջանակների որոշումը,
- ԱՌՆ-ի ուսուցման առարկայական չափորոշիչների, ծրագրերի վերանայման հարցերի քննարկումը,
- ԱՌՆ-ի ուսուցման համալիրի թեմաների ուղղահայաց և հորիզոնական ամբողջականացման ապահովումը (թեմաների հաջորդականություն, անխզելիություն, փոխանցելիություն և այլն),
- հրատապ նոր թեմաների առաջարկում,
- վերը բերված այլ հարցերի քննարկում, առաջարկությունների մշակում:

2. ԱԲՕ, ԱԿ դասավանդողների պատրաստման հարցերի լուծում:

3. ԱԲՕ-ի առարկայական չափորոշիչների, ծրագրերի վերանայում:
4. ԱԲՕ-ի, ԱԿ-ի դասասենյակների կահավորում:
5. Դպրոցի անվտանգության ապահովման հարցերի համալիրի մշակում: Դպրոցի ԱԻ պլանի վերանայում: Դպրոցներում անվտանգության գծով ծնողական խորհուրդների ստեղծում:
6. Համապատասխան գերատեսչությունների որոշումը կոպերատիվ, մատչելի դպրոցական լողավազանների ստեղծման համար:
7. 3,6,7 դասարանների դասղեկական ժամերի անցկացման բարելավման համար առարկայական չափորոշիչների-ծրագրերի, ուսուցչի ձեռնարկի, ուսումնամեթոդական նյութերի ստեղծում: Դասղեկների դասընթացների կազմակերպում:
8. 2-3 բազային դպրոցների ստեղծում:
9. ԱՌՆ-ի ուսուցմանը առնչվող արտադասարանական խմբակների (ԱԲՕ, փրկարարների, ռիսկի նվազեցման) ստեղծում: ԱՌՆ-ի ուսուցման վերաբերյալ օրենսդրական դաշտի վերանայում:

Գրականություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ”

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՀՀ Կառավարության 2004թ. հունիսի 17-ի NN 900-ն որոշման հավելված

“ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՐԳ” ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 27-ի N20 արձանագրային որոշման հավելված

Ս. Խաչատրյան և ուրիշներ “Հասարակագիտության ուսուցման արդի հիմնախնդիրներ”, Տիգրան մեծ, Երևան, 2005, 408 էջ

Ս. Խաչատրյան և ուրիշներ “Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը. ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար”, Այոեքս, Երևան, 2007թ.

“Կրթության արդի հիմնախնդիրներ. դեպքերի ուսումնասիրություններ, հեռանկարներ”, Լուսաբաց, Երևան 2005, 162 էջ

“Հասարակագիտության ինտեգրված ուսուցում”, Լուսաբաց, Երևան 2006, 428 էջ

“Հյոգոյի 2005-2015թթ. գործողությունների ծրագիր: Ազգերի և համայնքների՝ աղետների և ռիսկայելու ունակությունների զարգացում”, Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով, 18-22 հունվարի 2005թ., Քոբե, Հյոգո, Ճապոնիա

“Տեղեկագիր”, Հանրակրթական պետական չափորոշիչ, 4/2010

“Կրթություն-2015: Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր”

Հանրակրթական դպրոցի “Ես և շրջակա աշխարհը”, “Բնագիտություն”, “Աշխարհագրություն”, “Կենսաբանություն”, “Ֆիզիկա”, “Քիմիա”, “ՆԶՊ”, “Հայոց պատմություն”, “Ֆիզկուլտուրա”, “Հայրենագիտություն” առարկաների առարկայական չափորոշիչներ և ծրագրեր

“Հայաստանի՝ աղետների կառավարման և վտանգների մասին տեղեկատվական համակարգերի օրենսդրության և հաստատությունների գնահատում”, UNDP, Երևան 2009